



## ՄԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

#### ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

|                                                                                  |                   |
|----------------------------------------------------------------------------------|-------------------|
| ԱԶԳԱՅԻՆ. Միացեալ ընկերութեանց նշանակութիւնը Գաւառաց մէջ և Գաւառացւոց համար ..... | Բ. Քէճեան         |
| ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ. Հայք յԱմերիկա .....                                         | Տ. Հէփիմեան Սիւնի |
| ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՅ. Աղէքսանդրի վարժարանը .....                                | Յ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ     |
| ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ. Ալէքսանդր Տիւմա որդի (Ժիվ ՀՕՇ) Թարգմ. ....                          | Լ. Բ.             |
| ՆՈՐԱՎԷՊ. Փոթորիկը (Թոնի Ռէվիլոն) Թարգմ. ....                                     |                   |
| ԶԱՆԱԶԱՆՔ. Լոստայի կեդրոնական համակատունը .....                                   |                   |
| ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ. Արտաքին, Ներքին, Ազգային .....                           |                   |
| ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ. (ԿԶԱՎԷՏ ՏԸ ՄՕՆԹԷԲԷՆ) Թարգմ. ....                                 | Մ. ԶՈՊԱՆԵԱՆ       |

#### ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ

|                                       |                 |
|---------------------------------------|-----------------|
| Կ. ՊՈԼԻՍ ԵՒ ԳԱՆՈՆԵՐՈՒ — տարեկան ..... | Կէս ոսկի Օսման. |
| » » վեցամսեայ .....                   | Բառ »           |
| ՄԷԿ ԹԵՐԹԻՆ ԳԻՆՆ Է .....               | 60 փարայ        |
| Օտար քաղաքաց համար տարեկան .....      | 12 ֆրանք        |
| » » վեցամսեայ .....                   | 6 »             |
| Թղթատարութեան ծախք տարեկան .....      | Դան. արծ. 15    |
| վեցամսեայ .....                       | » » 7 1/2       |

Մասիսի խմբագրութեան ուղղեալ ո՛ր եւ է՝ գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց  
Ղալաթիա, Նորատուհնեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1884

# ԴՐԱՄԱԿԱՆ

## ՂԱՆԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 46 Նոյեմբեր

### ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿՐՈՅ

|                                      |           |
|--------------------------------------|-----------|
| 3 ամիս Լոնտրայի վրայ (պանքայի) ..... | 440       |
| 3 » » » (վճռակն) .....               | 409 3/8   |
| 3 » Բարիս, » (պանքայի) .....         | 22 97 1/2 |
| » » » (վճռակն) .....                 | 23 5      |

### ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Գոնսոյլիտէ

|                                 |                  |          |
|---------------------------------|------------------|----------|
| Երէկ երեկոյ գոցուեցաւ.....      | Գ. Տէր.....      | 9 8      |
| Պորսային գոցուեցէն վերջը .....  | » ...            | 9 7 1/2  |
| Բերայի մէջ .....                | » ...            | ...      |
| Առաւօտուն բացուեցաւ .....       | » ...            | 9 07 1/2 |
| Բարձրագոյն գին .....            | » ...            | 9 7 1/2  |
| Նուազագոյն .....                | » ...            | 9 7      |
| Կէս օրին .....                  | » ...            | 9 7      |
| Իւնիֆիէ Եգիպտական (Գ. Կ.).....  |                  | 70 20    |
| Երէկ իրեկուն գոցուեցաւ .....    |                  | 69 25    |
| Բերայի մէջ .....                |                  | —        |
| Այս առտուն բացուեցաւ Գ. Կ. .... |                  | —        |
| Կէս օրին .....                  |                  | —        |
| Հէվալէսիլ .....                 |                  | —        |
| Իէքօր Գոնսոյլիտէի .....         |                  | —        |
| » Իւնիֆիէի .....                |                  | —        |
| Փոխառութիւն 1863 .....          | Ֆր. ...          | 77       |
| » 1865 .....                    | » ...            | 58 50    |
| » 1869 .....                    | » ...            | 51 5     |
| » 1873 .....                    | » ...            | 46       |
| Պոն տիւ Թրէզոր .....            | Անգլ. Լ. Բ. .... | 22 25    |
| Բուսկիլի երկաթուղի .....        | Ֆր. ...          | 45 75    |
| Օպիկտսիւն աը Բրիտիթէ .....      | » ...            | 384      |
| Բաժնեթուղթ Լաւրիօմի .....       | » ...            | 74       |

### ԲԱՃՆԵՏՈՄՍԻ

|                          |                  |      |
|--------------------------|------------------|------|
| Սօսիթէ Ենէրալ .....      | Անգլ. Լ. Բ. .... | 3 32 |
| Քրէտի Ենէրալ (Գ. Կ.) ... | Օսմ. Լ. Բ. ....  | 7 40 |
| Պանք աը Գոնս. ....       | » ...            | 5 33 |
| Սօս. Շանժէ վալէօր .....  | Օսմ. Լ. Բ. ....  | 3 25 |
| Թրամնէյ .....            | » ...            | 285  |

### ԸՆԲԱԳՔ ՂՐԱՄՈՅ

|                         |           |        |
|-------------------------|-----------|--------|
| Օսմանեան ոսկի .....     | 702 ..... | 400    |
| 20 Ֆրանկոնոց .....      | » ...     | 87 38  |
| Անգլիական ոսկի .....    | » ...     | 410 20 |
| Բօլ Իմբերիալ .....      | » ...     | 90 08  |
| Քրիմից .....            | » ...     | 51 25  |
| Բուսկիլի Թղթադրամ ..... | » ...     | 8 87   |
| » արծաթ .....           | » ...     | 89 30  |
| Ֆիօրին .....            | » ...     | 9 1    |
| Մէճ. արծ. (տարբ.) ..... | » ...     | 408    |
| Վեցնոց .....            | » ...     | 403    |
| Հինգնոց .....           | » ...     | 403    |
| Մէթայիլք .....          | » ...     | 98 20  |
| Պղինձ .....             | » ...     | 780    |
| Թղթադրամ .....          | » ...     | 3000   |

## ԵՆՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 27 Նոյեմբեր ժամ 5 վայր. 45 երեկոյ

|                                    |          |
|------------------------------------|----------|
| Անգլ. քօնսովի...-ի գոցուեցաւ ..... | 400 9/16 |
| Օսմն. բացուեցաւ .....              | 8 9/16   |
| » » գոցուեցաւ .....                | 8 1/2    |
| Օսմն. փոխառութիւն 1865 .....       | 41 7/8   |
| » » 1869 .....                     | 40 3/8   |
| » » 1871 .....                     | 68 5/4   |
| » » 1872 .....                     | 21       |
| » » 1873 .....                     | 9 1/4    |
| Փոխառութիւն .....1877 .....        | 81 1/2   |
| Պանք Օթօման .....                  | 43 5/4   |
| Բուսսական փոխառ. 73 (գ. Կ.) .....  | 96 1/4   |
| Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ) .....  | 62 5/8   |
| » առանձն. (բրիվիլէֆիէ) ....        | 87 1/2   |
| Տայրա Սանիէ .....                  | 62       |
| Տօմանիալ (փոխառ. Բօչիլա) .....     | 90 1/4   |
| Հունգարական պարտաթուղթ 1877 .....  | 402 5/4  |
| Փոխանակութիւն Բարիդի վրայ .....    | —        |

Վիեննա, 27 Նոյեմբեր ժամ 4 երեկոյ

|                                |        |
|--------------------------------|--------|
| Փոխառութիւն Լոնտոնի վրայ ..... | 123 65 |
| Օսմանեան երկաթուղի .....       | 22 20  |

Բարիզ, 27 Նոյեմբ. ժամ 3 վայր. 45 երեկոյ

|                                        |            |
|----------------------------------------|------------|
| Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0.....բաց ..... | 108 62 1/2 |
| » » 3' 0/0.....բաց .....               | 78 92 1/2  |
| Օսմանեան քօնսոյիտէ բացուեցաւ .....     | 8 67 1/2   |
| » » գոցու. (Գ. Կ.) .....               | 8 52 1/2   |
| » » 1865 .....                         | 58         |
| » » 1869 .....                         | 52         |
| » » 1873 .....                         | 45         |
| Օսմանեան երկաթուղի .....               | 46 50      |
| » Բէժիլ բաժնեթուղթ.....                | 523 75     |
| Պանք Օթօման .....                      | 597 50     |
| Գրէտի Լիօնէ .....                      | 523 75     |
| » Ֆոնսիէ .....                         | 4237 50    |
| Բաժնետոմս Լիօնի (գուր. կար.) .....     | 4235       |
| Սուէզի ջրանցք .....                    | 4905       |
| Բուսկիլի 5 0/0 1877 .....              | 400        |
| Իտալական Ռանթ .....                    | 97 85      |
| Եգիպտական միացեալ գոց .....            | 313 50     |
| Սպանիական (արտաքին) .....              | 59 1/4     |
| Բրիտիթէ Բիւրք .....                    | 387 50     |
| 50/0 Հէվէական .....                    | 361 25     |
| Զէք Լոնտրայի վրայ .....                | 25 31      |

## ԲԱՐԻԶ ԲԵՅԹ ՊՈՒՐՍ

Նոյեմբեր 27 ժ. 10, վ. 45

|                             |          |
|-----------------------------|----------|
| Ֆրանս. Ռանթ, 4 1/2 0/0..... | 108 55   |
| Օսմանեան » .....            | 8 50 (°) |
| Եգիպտական միացեալ .....     | 316 25   |

# Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

33րդ ՏԱՐԻ

1884 ՆՈՅՆԵՐԵՐ 17

ԹԻԻ 3744

## ԱԶԳԱՅԻՆ

ՄԻԱՅԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ԳԱՒԱՌԱՅ ՄԷՋ ԵՒ ԳԱՒԱՌԱՅԻՈՅ ՀԱՄԱՐ

Շատ կը խորհուրի ու կը խօսուի, — առանց խորհելու ալ կը խօսուի, — Ազգին բարեկեցութեան միջոցներուն վրայ: Բայց ոմանք այնպէս կը նկատեն զայս խնդիր, իբր թէ ամեն ինչ կախում ունենար պաշտօնական և կառավարական գործողութենէ: Այս գործողութիւնն ունի անշուշտ իւր նշանակութիւնը կամ աննպատակ տալաւորութիւն: Բայց ազգային զարգացման խնդիրը լոկ այս տալաւորութեամբ չորոշուիր: Ներքին աշխատութիւնն մը անհրաժեշտ է, ներքին ոյժեր, ներքին տրամադրութիւններ, յատկապէս իրենց իրենց ներքին միջոցներ պատրաստելու համար: Այս ճանարտութեան վրայ ստէպ խօսուած է. բայց մեր մասին չենք տեսներ որ շատեր համոզուած լինին աղօր: Ստուգիւ, մեր ազգային ընթացք այդպիսի համոզման մը վրայ յենեալ չէ: Մեր խորհելու և գործելու եղանակներէն չերեւիր բնաւ թէ սկսած ենք իւր ճանարտ չափով զնահատել պաշտօնական գործողութիւնն, և ազգային զարգացման միջոցներն որոնել ներքին պատրաստութեան մէջ: Չենք մտածեր թէ վարչային գործողութիւններն իսկ կրնան նպատակաւոր լինել ազգային զարգացման գործին նոյն համեմատութեամբ միայն որով ներքին տրամադրութիւնն մը կայ օգտուելու անոնցմէ: Ահարկ մը նետենք չորս

կողմ, Կ. Պոլսոյ վրայ լինի թէ դաւառաց վրայ կրնանք տեսնել այդպիսի ներքին տրամադրութիւն մը: Ժամանակին մղումէն, քաղաքակրթութեան հոսանքէն օգուտ քաղելու համար լուրջ պատրաստութիւնն մը կը տեսնենք մեր մէջ: Այս ընթացքով, պաշտօնական նպատակաւոր գործողութիւնն մ'իսկ զգալի տալաւորութիւնն չի կրնար ընել, մինչ աննպատակ գործողութիւնն մը աւելի ծանր հետեւանք կարող է ունենալ: Այս ներքին տրամադրութեան ու ներքին ոյժի բացակայութիւնն՝ ըստ մեզ՝ ամենէն աղետալի երեւոյթն է ազգային կենաց մէջ: Մեր կըրթական, եկեղեցական, բարեգործական հաստատութեանց ու մարմնոց անգոհացուցիչ վիճակն է պատճառ այս ներքին ոյժերու բացակայութեան, և այդ վիճակն ալ պէտք է վերագրել գաղափարաց և զգացմանց այնպիսի տրամադրութեան մը, յորում չափազանց յոյս — կամ յուսահատութիւն — կը գրուի պաշտօնական, վարչային գործողութեան վրայ, և ըստ բաւականին հաւատ չընծայուիր ազգային ինքնօգնութեան:

\* \*

Թէեւ ինքնօգնութեան ոգին չէ զարգացած մեր մէջ, բայց պակաս չեն միջոցներ որովք այս ոգի կրնայ ի յայտ գալ, եթէ միայն կամինք ըստ արժանւոյն գործածել զայնս:

Գաւառաց ամենէն յետադէմ վայրերուն մէջ նոր սերունդները ժամանակիս պիտոյից համեմատ պատրաստելու նպատակաւ ամենայարմար կարմակերպութիւն մ'են Միացեալ Ընկերութիւնը: Բայց հասկնալու համար Միացեալ Ընկերութեանց կատարած

պաշտօնին կարեւորութիւնը, պէտք է իւր բուն նշանակութեամբ ըմբռնել ազգային կրթութեան կարեւորութիւնն, և ահա՛ յայտնաբերուին մեր և գաւառացւոց հաւատքը շատ թեթեւ է, գաղափարները՝ շատ ցանցաւ: Թէ՛ տնտեսական և թէ՛ ազգային բարեօրինման մը գլխաւոր միջոցն է խնամակալ կրթութեան մը: Բնաւ տարակոյս պէտք չէ ունենալ որ այն գաւառացիք որք ոտացած են կրթութեան գոհնէ անհրաժեշտ տարրերն, իրենց բոլորովին տգէտ եղբայրներէ աւելի մեծ ընդունակութիւն ցոյց կուտան լաւ և արդիւնաւոր կերպիւ աշխատելու, և անոնցմէ աւելի կը յարին իրենց եկեղեցւոյ ու ազգութեան: Կան վայրեր ուր կորած է ազգային լեզուի գործածումն, և եկեղեցիներ փակուած են: Այսպիսի տեղեր կրթութիւնն արդարեւ հրաշալիք կրնայ գործել, երկրին և ազգին օգտակար քաղաքացիներ պատրաստելով թշուառ և տգէտ ամբոխի մը մէջէն: Ազգի մը վարդապետն տեսակէտով մեծ կշիռ ունի ներքին ոյժ մը, որ կը պատրաստուի՝ բարոյապէս, մտապէս և տնտեսապէս զօրացնելով Ազգին այս տկար մասերն: Երկրին և ժողովրդեան համար զայս յոյժ օգտակար ծառայութիւն մատուցանել կոչուած են Միացեալ Ընկերութիւնք, որք արտայայտութիւն մ'են՝ թէ և ցարդ տկար արտայայտութիւն մը՝ այն հաւատոյ զոր Ազգն ունի իւր գաւառացի եղբայր ապագային վրայ, և այն համոզման թէ, մեր գոյութիւնն իսկ սահմանաւոր համար պէտք է հայ ընկերութեան ամեն խաւերուն մէջ տարածել ժամանակիս յառաջդիմութեան տարրերը:

\*  
\* \*

Յաւելով տեղեկացանք Միացեալ Ընկերութեանց Վարչութեան վերջին տեղեկագրէն, թէ գաւառներն իրենք կարի անտարբեր են այս հաստատութեան նկատմամբ: Մէկ երկու տեղեր Ընկերութեան մը կամ վնասաբեր գծովութիւններու պատճառաւ, չեն ուղած վճարել իրենց յատկացուցած գումարներն, և ուրիշ տեղեր Ընկերութեան հաստատած ճիւղերը ձեռնկալի եղած են գործելէ ի նպաստ Ընկերութեան:

Այս եղեղութիւնք ցաւ կը պատճառեն մեզ ոչ այնչափ որովհետեւ գծովութիւն մ'են և կը յարուցանեն Միացեալ Ընկերութեանց կատարած գործին վէժ, որուն ամեն դիւրութիւն ընծայել ամեն բարի Հայու պարտականութիւնն է, որչափ զի ցոյց կուտան թէ գաւառացւոց մէջ կը սակսին երկու կարեւոր հանգամանքներ, որք անհրաժեշտ են որ և է ժողովրդի նիւթական և բարոյական վարդապետն համար: Ասոնք են, Ինքնօգնութիւն և Համերաշխութիւն:

Ինքնօգնութիւնն զմեզ ամենա պարտի մըլ մեր յոյսերը դնելու ըստ կարի մեր գործելու միջոցներուն վրայ: Այս զգացումով է որ Ազգը ներքնապէս կ'աշխատի իւր յառաջդիմութեան համար, և ազգայնոց մէջ մի համախմբումը, մասնաւոր քաղաքներն ու գաւառները, կ'աշխատին իրենց սեփական միջոցներով՝ իրենց վարդապետն համար:

Համերաշխութեան զգացումն զմեզ պարտի մըլ Ազգին տկարագոյն մասանց յառաջդիմութեան գործին նպաստելու: Եթէ Ինքնօգնութիւնը գովելի ինքնասիրութիւն մ'ունի, Համերաշխութիւնն ոչինչ նուազ գովելի ընկերասիրութեան մը արտայայտութիւնն է: Ասոնք կը կազմեն մարդկային բնաւորութեան ամբողջութիւնն, և կատարեալ կազմակերպութիւն ունեցող ժողովրդի մը մէջ եւս այդ երկու զգացումնք համընթաց պարտին լինել:

Միացեալ Ընկերութիւնք այս կրկին ըզգացմանց մշակման յարմարագոյն միջոցները կ'ընծայեն գաւառացւոց, և այս է՝ ըստ մեզ՝ Միացեալ Ընկերութեանց նշանակութիւնը գաւառաց մէջ և գաւառացւոց համար:

Բոլոր այն հրաւերներ և յորդորներ որք Միացեալ Ընկերութեանց կողմէ պարբերաբար կ'ուղղուին առ Ազգն՝ կ'ամփոփուին այս երկու բառերու մէջ. Ինքնօգնութիւն և Համերաշխութիւն:

Ինքնօգնութեան կը հրաւիրուին գաւառացիք, Միացեալ Ընկերութեանց հսկողութեան ներքեւ գոյրոցներ բանալու՝ ըստ Գաւառացիք: Գաւառացիք այսպէս կրնան ստանալ ժամանակիս պահանջմանց աւելի յարմար կրթական դրութեան մը բարիքը, բայց այդ կրթութեան համար վճարել պար-

տաւորութեամբ, կը սովորին գնահատել զայն : Զրի ստացուած բարիք, նիւթական լինին թէ բարոյական, լաւ տաւորութիւն չեն ընեն : Անհատներն ինչպէս ժողովուրդները կը վարժեցնեն մուրալու, և իրենց յատուկ միջոցներով գործ մը արտադրելու կամ պէտք մը գոհացնելու մասին անոնց հաւատքը կը ջնջեն : Բարեգործութեան միակ թերութիւնն է այս : Միացեալ Ընկերութիւնը շատ սխալ ընթացք մը բռնած կը լինէին, եթէ սկզբունքը գնէին՝ իրենց բոլոր կարողութիւնը գործածել կարօտ վայրերու մէջ ոչինչ ստանալով տեղացիներէն : Այդ կերպիւ տեղացիք, որք արդէն պէտք եղածէն աւելի դրած են իրենց յոյսը Կ. Պոլսոյ վրայ, տեսնելով թէ կրթութիւնն եւս ձրիապէս կը բռնան ստանալ մայրաքաղաքէն, բնաւ գրգռու չսկսին զգային՝ իրենց ձեռամբք, իրենց միջոցներով աշխատելու իրենց զարգացման համար, ինչպէս իրենց ձեռամբք կաշխատին իրենց հացին համար, զի ակնկալութիւն չունին տեղէ մը ձրի հաց ստանալու : Բարոյական թուրութիւնն ու անգործութիւնն որք այսու յառաջ պիտի գային՝ աւելի մեծ վնաս մը պիտի արտադրէին անշուշտ քան բոլոր այն օգուտը որ պիտի ունենար Միացեալ Ընկերութեանց գործունեութիւնը գաւառացի մէջ : Զիս գաւառ մը, քաղաք մը, և մինչեւ իսկ գիւղ մը, որ դրամով կամ ապրանքով բան մը չկարենայ տալ իւր գաւառացի կրթութեան համար : Ինչ որ կրնան տալ՝ առնուլ և իրենց աչաց առջեւ գործածել իրենց տղայոց կրթութեան համար՝ կը մշակէ գաւառացւոց մէջ ինքնօգնութեան միակարար ոգին, և սլարտաւորելով զայնս որ ուշադրութիւն ընծայեն այն գործին յորում կը գործածուի իրենց դրամը, կը վարժեցնէ զանոնք օր մը ստանձնելու իրենց գաւառացի կրթութեան գործն, և ազատ թողլու Միացեալ Ընկերութիւններն որ ուրիշ աւելի կարօտ կեդրոններու մէջ եւս նոյն ծառայութիւնը մատուցանեն : Հետեւապէս, գաւառացւոց ինքնօգնութիւնը լրի նիւթական հարկ մը չէ Միացեալ Ընկերութեանց համար : Գաւառացիք ինքնօգնութեան պէտք է վարժուին ո՛չ միայն զի Միացեալ Ընկերութիւնը նիւթապէս անկարող են ամեն տեղ դպրոց բանալ իրենց ծախքով, այլ նաեւ զի ինքնօգ-

նութեամբ գործելու գրութիւնն ինքնին բարիք մ'է գաւառացւոց համար : Այս կրկին տեսնութեամբ, Միացեալ Ընկերութիւնը ամեն շահ, ամեն պարտականութիւն ունին ամեն առթիւ գաւառներն հրաւիրելու ինքնօգնութեան, և խիստ ընթացք բռնելու այնպիսի վայրերու նկատմամբ ուր տեղացիք կը զլանան իրենց կարողութեան չափով նպատակ իրենց գաւառացի կրթութեան :

Միւս կողմէ, Միացեալ Ընկերութիւնը կոչում կ'ընեն մեր հասարակարկէն զգացման : Կ. Պոլսոյ Հայը բաւական վարժուած է այս զգացման . զի շատ անգամ կուտայ ի նպաստ իւր հեռաբնակ եղբարց, որոց հետ կը զգայ թէ համերաշխութեան կապ մը կը միացնէ զինք : Բայց գաւառացի մէջ կը շարունակուի «*բեզար*» խոսքով թերեւս սլարտինք որոնել Հայութեան մեծագոյն դժբախտութեանց պատճառները : Տեղային ոգին տեղոյ մը, գաւառի մը, քաղաքի մը համար նոյն զգացումն է, ինչ որ է չարազանց եսասիրութիւն մը, ինքնասիրութիւն մը՝ անհատի մը համար : Մասնաւոր վայր մը ինքզինք մեկուսացեալ կը կարծէ Ազգին ամբողջութենէն, և բնաւ փոյթ չընեն քիչ մը հեռաւոր վայրի մը ազգակցաց վիճակին : Ազգին այլ և այլ հատուածները կը զրկուցեալ կ'ապրին, անհաղորդ իրարու պիտոյից, ցաւոց և բերկրութեանց : Այն դէպքեր, այն խնդիրներ, այն մեծ մարդեր և այն մեծ կարմակերպութիւններ, որք համերաշխութեան կապով մը կը միացնեն ժողովրդի մը այս անշատ մասեր, յատուկ գոհունակութիւն սլարտին սողել : Ի մասնաւորի Միացեալ Ընկերութեանց վրայ խօսելով մեք բոլորովին բացառիկ նշանակութիւն մը կուտանք անոնց . զի կը տեսնենք թէ՛ Ազգին ընդհանուր և տեւական զարգացման կենսական գործին հետ լծորդեալ մարմին մը՝ անոնք յարմարադոյն միջոցն են մշակելու Հայ ժողովրդեան զանազան մասանց համերաշխութեան զգացումն իւր աւելի կարօտ, աւելի խեղճ մասանց նկատմամբ : Հայաստանի սովորոց համար եղած հանգանակութիւնն եւս, որ այնպէս իրական յաջողութեամբ մը սլարտեցաւ, բաւական նպաստեց բարոյապէս աւելի մօտէն միմեանց ձանձրնելու Ազգին ամենէն հեռաբնակ մասերն, և իրարու պիտոյից ու

վշտաց հաղորդակից ընկերու զայնս : Բարեբախտապէս , այսչափ դիւցազնական միջոցներու պէտք չունինք յաճախ դիմելու : Միացեալ Ընկերութիւնք են աւելի տեւական հաստատութիւն մը , որք եթէ ոչ այնքան յանկարծական զօրութեամբ ու գիւթիչ ազդեցութեամբ , բայց տակաւ առ տակաւ կրնան վարժեցնել ազգայինները , մանաւանդ զաւառացի ազգայիններն , իրենց հեռաւոր եղբարց մտային ու բարոյական պիտոյից նըդատելու : Այն անուղղակի բայց ոչինչ նըւազ իրական բարիք , որ կը ծագի հայ ժողովրդեան զանազան մասերն այսպէս միմեանց հետ համերաշխ պահելէն , մեր տեսութեամբ վար չի մնար ուղղակի բարիքէն , այսինքն՝ Միացեալ Ընկերութեանց տեղային ու զաւառային բաժանորդագրութեամբք ու հանդանակութեամբք ստացած նիւթական նպատակներէն :

\*  
\* \*

Այս մտածումներով , յոյժ օգտակար կը համարինք որ Միացեալ Ընկերութիւնք ճիւղաւորուն զաւառաց մէջ , և ուր որ դըպրոցներ բանալով չեն ծաւալած իրենց գործողութիւն , ճիւղեր հաստատելով ծաւալեն զայն ու ծաւալին : Նիւթապէս , Միացեալ Ընկերութեանց տեւականութիւնն ու յաջողութիւնը կախում ունին մնայուն բաժանորդաց շատութենէն : Գիւղական նպատակներ շատ կարեւոր դումարներու կրնան հասնիլ , և օգտակարապէս գործածուիլ . բայց ապահով հիման մը վրայ հաստատուած չը լինիր Ընկերութեան գործն , եթէ մեծադոյն մասամբ դիւրուածական նպատակներու կարօտ մնայ : Բարոյապէս , մնայուն բաժանորդագրութիւնք , ըստ կարի տարածուածամեն հայաբնակ վայրեր , փրկարար ապաւորութիւն մը կ'ընեն ժողովրդեան ազգային — բարոյական կրթութեան վրայ : Այս նըկատմամբ անհուն տարբերութիւն մը կայ տարեկան պարահանդէսով մը հայթայթուած հասոյթի մը և ամսական բաժանորդագրութեամբ հաւաքուած հասոյթի մը միջեւ : Առաջինը կ'ընդունուի՝ իւր ամեն անպատեհութեամբք հանդերձ՝ լոկ իւր գրամական կողմին համար . մինչ երկրորդն՝ ամեն անպատեհութենէ՛ղերձ՝ կրնայ յանձնարարուիլ թէ՛ լոկ դրամական և թէ՛ բարոյա-

կան տեսութեամբք : Այս կարգի նկատումներ բաւ են մըկելու համար Միացեալ Ընկերութեանց Վարչութիւններն որ մեծադոյն կարեւորութիւն մը տան բաժանորդագրութեանց , և հետեւապէս մասնաճիւղերու հաստատման :

Նւ կ'արժէ որ զաւառացի ազգայինք այս մասին օգնեն Միացեալ Ընկերութեանց : Աւրեք ուրեք , անհրաժեշտ է որ Հայաստանի և Նիւիլիոյ ազգայիններ առաւելապէս ցոյց տան ինքնօգնութեան ոգի , և ամեն բեռ Միացեալ Ընկերութեանց վրայ չթողուն : Աւրիչ տեղեր , անհրաժեշտ է ազգայինք ըմբռնեն թէ համերաշխութեան կապն որ իբրեւ Հայ կը միացնէ զիրենք այս հեռաւոր վայրերու դժբախտ ազգայնոց հետ , պարտ կը դնէ իրենց վրայ՝ նիւթապէս նպատակ անոնց կրթութեան , որ է՝ համայն Ազգին յառաջդիմութեան և ապագայ զարգացման գործոյն իսկ : Միացեալ Ընկերութիւնք հոյ երիտասարդութեան ձեռակերտն են , և զաւառացի երիտասարդութիւնն եւս Պոլսեցի երիտասարդութեան չափ պատուոյ պարտականութիւն մը ունի նիւթապէս ու բարոյապէս նպատակելու այս հաստատութեան պահպանման ու զարգացման :

Բ. Բ.

## ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

### ՀԱՅՔ ՅԱՄԱՐԻԿԱՍ

Նիւ-Եօքը , 9 Նոյեմբեր 1884

Որչա՛փ փախաքելի է որ Հայերն աշխարհի որ կողմն ալ ցրուին , իրենց մէջ ունենան միութեան այնպիսի կապեր ոյք զնոսա միմեանց հետ սերտիւ միացեալ պահեն , և հեռանալով հանդերձ իրենց հայրենիքէն՝ կարող լինին իրենց ուշադրութիւնը կեդրոնացնել միշտ հայ ազգի զարգացման պայմաններուն վրայ :

Բաւական տարիներէ հետէ Հայեր սկըսած են զալ յԱմերիկա , և շատեր ցրուած են այս ընդարձակ երկրին այլ և այլ կողմերն . բայց մի մեծ մաս շարունակ զըտնուած է Նիւ-Եօքըի և նորա մերձակայ քաղաքները : Դժբաղդաբար մինչեւ ցարդ այս Հայերն որ և իցէ կեդրոն մ'ունենցած չէին

ուր մերթ ընդ մերթ հաւաքուելով հաստատէին իրարու հետ յարաբերութիւններ և ներկայանային Ամերիկացւոց իբրեւ մի մարմին և այս նոր երկրին մէջ իբր ներկայացուցիչք հին և դարաւոր ազգի մը : Աւելի ցաւալին այն էր որ այս Հայերէն շատերն զիրար իսկ չէին ճանաչեր և չէին զիտեր թէ իրենց մօտ ուրիշ Հայեր կային : Սակայն այժմ մեծաւ ուրախութեամբ կը ծանուցանեմ թէ Պ. Մինասեանի և ուրիշ մի քանի պարոններու խրախուսանօք Նիւ-Եօքքի և շրջակայից Հայերն սկսած են երեք շաբաթն մի անգամ դուրսնել յատուկ տեղ մը, ուր կ'երգեն ազգային երգեր և կ'արտասանեն հայերէն ու թուրքերէն ատենաբանութիւններ :

Այս յատուկ տեղն է ի Պրուքլին (որ ճարտարաբուստ կամուրջով մը միացած է Նիւ-Եօքքի հետ) և կը պատկանի Ամերիկայի ամենէն նշանաւոր և ճարտասան քարոզիչներէն միոյն՝ Պատ. Մր. Պիքըրի եկեղեցւոյն : Մեր առաջին ժողովն տեղի ունեցաւ հոկտ. 15 ին. ներկայ էին բաւական թուով Հայեր, և մի քանի հայուհի տիկնայք : Յատկապէս կի յիշեմ ազնուունի տիկին Մինասեան որ թէեւ հայերէն չէր հասկնար, բայց իբրեւ լծակից մի ազգասէր Հայու և իբրեւ բարեկամ Հայոց, հեռաւոր վայրէ եկած էր իւր ներկայութեամբ պատուել Հայոց ժողովն : Այս ժողովը մէջ ատենաբանեց Պ. Անդրանիկ Այվազեան. ատենաբանութեան նիւթն էր « Յառաջագիտութիւն » : Ատենաբանն յետ ողջունելոյ իւր ունկնդիրներն, ի դիմաց մայր հայրենեաց և ազգային մեծ մարմնոյն բացատրեց նախ թէ քաղաքակրթութեան, գիտութեան և արուեստից հրաջնեքն, որ ամեն օր և ամեն քայլափոխի կը տեսնուին այս մեծ քաղաքին մէջ, են արդիւնք յառաջագիտութեան ոգւոյն : Յետոյ նուրբ կերպով բացատրեց թէ՛ ո՞չք են յառաջագիտութեան պայմանք, և խօսքն մասնաւորելով աստ գտնուող ազգայնոց, բացատրեց նոցա թէ՛ իրենց նուիրական պարտականութիւնն է իրենց բարի վարուք և յարատեւ աշխատասիրութեամբն լաւ ներկայացունել հայ ազգն Ամերիկացւոց : Ատենաբանն իւր խօսքը վերջացուց յորդորելով զհանդիսականս որ մինչ այս քաղաքակրթ երկրին դիւրութիւններէն օգուտ

քաղելով յառաջագիտութեան ասպարէզին մէջ նոր նոր քայլեր կ'առնուն, չմոռնան իրենց հայրենակիցներն և օգնեն անոնց յառաջագիտութեան, միջնորդներ լինին օգտակար արուեստներ, գիտութիւն և բարձր քաղաքակրթութիւն փոխադրելու նոր աշխարհէ ի հինն : « Մեր երկիրն, ըսաւ, կարօտ է ի սփիւռս աշխարհի ցրուեալ իւր որդւոց անձնուէր ջանից, որպէս զի գիտութեան և հարստութեան ճանապարհին մէջ արիւարար ընթանայ : »

Պ. Մինասեան ի դիմաց ժողովոյ շնորհակալութիւն յայտնեց առ Պ. Անդրանիկ Այվազեան որ առաջին անգամ ըլլալով՝ Ամերիկայի մէջ հայ ունկնդրաց խօսեցաւ հայերէն այնչափ ազդու լեզուով : Բոլոր ունկնդիրք ձայնակից եղան յարգոյ Պ. Մինասեանի ուժգին ծախահարութեամբ, և շատ զգածեալ կերպով մեկնեցան՝ քաղցր յիշատակներ տանելով իրենց հետ :

Երկրորդ գումարումն եղաւ նոյ. 5 ի երկրորդն : Մինչ Ամերիկայի քաղաքացիք Նախագահական ընտրութեան մեծ խնդրով զբաղեալ և չափազանց յուզեալ էին, Հայերը բաւական հեռաւոր տեղերէ խումբ խումբ կը դիմէին ի Պրուքլին, իրենց հայրենեաց և իրենց ազգին օգտաւէտ խնդրոց վրայ ատենաբանութիւններ լսելու ջերմ փափաքով :

Ժողովը կը նախագահէր Մեծ. Պ. Մինասեան : Ազգային երգով մը բացուեցաւ ժողովն, և նախ ատենաբանեց Մեծ. Տոքթ. Մ. Տատրեան, իրեն նիւթ ընտրելով թէ Ամերիկա ի՞նչ առաւելութիւններ կ'ընծայէ գաղթականաց որ Եւրոպոյ այլ և այլ երկիրներէ, նոյն իսկ Թուրքիայէ կը գլմեն այս երկիրն : Յարգոյ ատենաբանը ցուցուց թէ Հայք Ամերիկայի մէջ ի՞նչ օգուտներ կրնան տեսնել անհատապէս, եւ ի՞նչպէս կրնան բոլոր ազգին օգտակար ըլլալու դրից մէջ գտնուիլ : Յետոյ ուրիշ ազգային երգ մը երգուեցաւ : Նախագահը ժողովին ներկայացուց զտիկին Անի Սարրաֆեան որ կարգաց գողար և աղքու ճառ մը որոյ օրինակը կը զրկուի ձեզ : Յետոյ տիկին Զարուհի Սարրաֆեան երգեց « Տէ՛ր, կեցո՛ւ զՀայս » : Ապա Արապկիւրու Հայ Աւետարանական ժողովըրդեան երէցն, Պատ. Մ. Սիրականեան, համառօտ եւ աղքու ատենաբանութիւն մը

ըրաւ, եւ ցոյց տուաւ թէ Եւրոպիոյ եւ Ամերիկայի մէջ դաստիարակութիւնն ո՛րչափ բարձրացուցած եւ աշխուհացուցած է երեսօտասարդներն ու օրիորդները, մինչ մեր երկրին մէջ հազարաւոր հանձարեղ պատանիք եւ օրիորդք կրթութեան բարեկերէ գութի կը մնան: Յորդորեց ունկնդիրները ջանալ իրենց սիրտն եւ միտքը միանդամայն մշակելու եւ օգնելու իրենց հայրենակցաց:

Յրբեմն Ատանայի Հայ Աւետարանական ժողովրդեան քարոյիչ Պատ. Յարութիւն Ճէնանեան, որ այժմ Նիւ-Յօրք կը գտնուի աստուածաբանութիւն ուսանելու համար, եւ ամեն կիրակի անձնուիրութեամբ կը քարոյզէ այս քաղաքին մէջ գտնուած Աւետարանական Հայոց, թուրքերէն լեզուաւ ոտանաւոր մը կարգաց ի յորդոր Հայոց որ չլըհատելով դժուարութիւններէ եւ արգելքներէ՝ ջանան անդու յառաջադիմել ի բարոյականութիւն եւ ի քաղաքակրթութիւն:

Նախագահն, յարգոյ ատենաբաններուն շնորհակալութիւն յայտնեց ի դիմաց ունկնդրաց, և առաջարկեց որ Նիւ-Յօրքի Հայք իրենց ազգասիրութեանն ազապոյց տան իրենց նուէրները զրկելով Միացեալ Բնկերութեանց որ Հայաստանի մէջ կրթութիւն սփռելու գովելի նպատակով կ'աշխատին: Պ. Անդրանիկ Այվազեան ի դիմաց Միացեալ Բնկերութեանց շնորհակալութիւն յայտնեց Պ. Մինասեանի և ատենաբանից, և յորդորեց հանդիսականներն աստուածաբանք առ իրենց նուէրները Միացեալ Բնկերութեանց, ըսելով որ իրենց լուսմաներն իւզ պիտի աւելցնեն այն կանգեղին որ մեր սիրելի հայրենեաց լուսաւորութեան համար վառ կը մնայ:

Ունկնդիրք մեծ գոհութեամբ մեկնեցան և աւելի եռանդ ցոյց կուտային յաճախ դումարուելու այսպիսի հաճելի ժողովներ կազմելով: Այս ձմեռ ատենաբանութիւններ պիտի շարունակուին, և տարակոյս չունինք որ օգտակար պիտի լինին թէ՛ ընկերական յարաբերութիւն հաստատելու այս տեղի Հայոց միջեւ և թէ՛ ազգութեան ոգին միշտ վառ պահելու ի նոսա:

Տ. ՀԵՔԻՄԵԱՆ ՍԻՒՆԻ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

### Ա. ՂԷՔՍԱՆԴՐԻՈՅ Վ. ԱՐԺԱՐԱՆԸ

Երբ մեծն Աղէքսանդր իւր տէրութիւնը հաստատ հիմանց վրայ դրաւ՝ ինքն անձամբ ընտրեց այն տեղը ուր իւր անուամբ ցարդ կանգուն քաղաքն հիմնեց: Եւրոպիոյ, Ասիոյ և Ափրիկէի ծանօթ մասանց կեդրոնը, հիմանալի դիրքովն Աղէքսանդրիա կրնար իւր նաւահանգստից մէջ կեդրոնացնել իշխող տէրութեան ազդեցութեան ենթակայ համայն երկիրներու վաճառականութիւնը: Միջերկրականով Արեւելքի հետ կը հաղորդակցէր և Մարիթիմ լճով, Նեղոսով ու Արաբական ծոցով աւելի հեռունները: Քիչ ատենէն իրականացան հիմնարկովին հաշիւներն, և հապիւ հաստատուած՝ մի քանի տարւոյ մէջ սկսաւ փայլել Աղէքսանդրիա:

Ժամանակին գիտութեանց կեդրոնն ևս Աղէքսանդրիան ընել մեծանուն աշխարհակալին հաշուց մէջ էր, սակայն ժամանակ չէր ունեցած իրաւործելու: Պողոմէոս Սոթէր ու այ բաժնին Նդիպոսս ինկած էր յետ մահուան Աղէքսանդրի՝ գիտուններն ու փիլիսոփաները իւր մայրաքաղաքին մէջ հաւաքելու համար նոցա աշխատութեանց ի գիւրութիւն ամեն միջոցներ ի դործ դրաւ: Ասոնց առաջինն էր դրատան մը հիմնարկութիւնը՝ որ մինչեւ 20,000 հատոր պարունակեց Պողոմէոսի կենդանութեանը ատեն:

Նորա որդին և յաջորդ Պողոմէոս շարունակեց դրատան զարգացումը շարունակ ձեռագիր գնելով յԱթէնք և ի Հռոմք, և ի մէջ այլոց Թէփրատտէսի ժառանգորդներէն Արիստոտելի ամբողջ գրատունը գնեց: Ասկէ ի վատ գեղեցիկ չէնք մը շինել տուաւ որ Միւզէոմ կը կոչուէր, ինչու որ Մուսայից նուիրեալ էր և անդ երեւելի գիտունք տէրութեան ծախիւք կ'ապրէին: Միւզէոմը արքունի պալատին կից էր. կը պարունակէր ընդարձակ ամփիթատրոններ հասարակային դասախօսութեանց յատկացեալ, մարդագնութեան սրահներ, դիտարան, տընկաբանական և կենդանաբանական պարտէզ, հազուադիւս և հետաքրքրաշարժ դործիք պարունակող սրահներ և վերջապէս

գրատուէն : Հետզհետէ յարակից շէնքեր կ'աւելցուէին գրատան մէջ յաւելեալ գրեանքը պատասխարելու համար և ընդարձակ գործարաններ կային քաջէրէսը պատրաստելու համար որոյ վրայ կը գրուէին ձեռագիրք , ինչու որ թուղթ չկար այն տաւն : Այս երկրորդ Պաղմէսի իշխանութեան վերջը գրատունը կը պարունակէր 400,000 հատոր որոց 90,000ը հեղինակութիւնք և մնացեալն ուրիշ գրեանք ընդօրինակութիւնք :

Այս ուսումնասէր թագաւորը հաստատեց նաեւ ի պատիւ Մուսայից և Ասողունի խաղեր, որք գիտնոց միջեւ մրցումներ էին , և ուր մրցանակներ կը բաշխուէին յաջողագոյններու :

Երրորդ Պաղմէս մը յաջորդեց այս երկրորդին և նորա անուան հետ նորա յատկութիւններն ալ ունէր լիովին : Գալիանոս կը պատմէ թէ նա խնդրեց Աթենացիներէն Էսքիլէսի , Սոփոկլէսի և Եւրիբիտէսի գործերը , զանոնք ընդօրինակելու և համար փոխարէն տասնհազար տաղանդ արծաթ (3000 ոսկիէ աւելի) աւանդ ձգեց : Ընդօրինակութիւնը ամենայն խնամք կատարուեցաւ զբանջելի քաջէրէսի վրայ և արքայն հրամայեց որ Աթենացւոց արուին օրինակները փոխանակ բնագիրներուն , և այս փոփոխութեան համար նոցա շնորհեց մեծազումար աւանդը : Անխտի ամեն գիրք կ'օրինակուէին և Նինուէի ցիր և ցան գրատան բեկորները տակաւ առ տակաւ կուգային զետեղուիլ իրենց կարգին : Մեծն Աղէքսանդր Գաղղէացւոց պատմական գրութիւնքը յունարէնի թարգմանել տուած էր արդէն . իւր յաջորդ Պաղմէսները Հին Ատակարանի երբայրէն բնագիրը եօթանասուն յոյն գիտնոց յանձնեցին որ յունարէնի թարգմանեն :

Երբ Կեսար Քրիստոսէ 47 տարի առաջ Աղէքսանդրիոյ տիրապետեց՝ Միւզէոմի մէջ 400,000 հատոր գիրք կար և նորա յաւելուածին մէջ 500,000 : Բայց կռուոյ միջոցին կրակ պատահելով ամբողջ Միւզէոմը այրեցաւ : Քիչ ատեն վերջը Անտոնինոս կայսրը , Կէդրատորայի սիրահար՝ սիրտը չահելու համար անոր նուիրեց Պերկամայի թագաւորաց գրատունը որ կը պարունակէր 200,000 հատոր գիրք , որոց մէջ մէկ գիրք չկար կրկին օրինակ : Բայց այս ամենը Քրիստոսի 590

թուականին Թէոդոս կայսեր օրով ոչնչացան՝ այնպէս որ երբ 640 թուականին Արաբները Օմէրի առաջնորդութեամբ Աղէքսանդրիան գրաւեցին , միայն բեկորները կըրցան գտնել :

Պաղմէսներու արքունիքը փայլեցնող գիտնոց մէջէն երեւելիներն են Եւքլիտէս մեծ երկրաչափն , որ Աթէնքէն եկած էր , Արքիմէտէս որ թէպէտ ի Սիրակուսա կը բնակէր , սակայն միշտ յարաբերութեան մէջ էր Միւզէոմի հետ : Երաթնութէնէս որ առաջինն եղաւ գիտնական կերպիւ երկիրս չափելու փորձող , և որ կրնայ նկատուիլ իբր հիմնարկու Աշխարհագրութեան : Արողղոնիոս չափադէտը , վերջապէս Հիպպարքոս որ չափադիտական աստեղադիտութիւնն հիմնեց , և որ գիշերահաւասարներու փոփոխութիւնքը դտաւ :

Ահա այն ատեն գիտութիւնը հասաւ այն բարձր աստիճանին որ ամբողջ հնութեան մէջ երբէք չէ գերազանցած : Այն ատեն ձեռք ձեռքի տուին չափադէտը , բնագէտը , աստեղագէտը և մեքենագէտը , իրարու օգնեցին և յաջողեցան քայլ մը առնել դէպի ճշմարտութիւն , ուստի այնքան հեռու մնացած էին հին յոյն փիլիսոփայները իրենց տարօրինակ սկզբունքներով , զորս պիտի ներկայացնեմ յաջորդ յօդուածով :

Գիտութիւնը ձեւ և մարմին առած էր քանի որ կանոնաւոր և ընդարձակ գիրքեր չինուած էին լաւ դասակարգուած և լաւ համախմբեալ : Հետաքրքրական է այս մասին ժամանակակից կղերականի մը կարծիքն աստ ներկայացնել :

Անաթոլիոս<sup>(1)</sup> ( ըստ Հանրի Մարթէնի ) կ'ըսէ թէ Պիւթագորէանց ժամանակ փիլիսոփաները կը կարծէին թէ գիտութիւնը մի միայն յաւիտենական , անփոփոխ և վերացական նիւթերով միայն պէտք է զբաղի : Բայց ներկայ ժամանակիս չափադէտը չէ թէ միայն անմարմին և իտէալ նիւթերով կ'ըզբաղի , այլ նաեւ մարմնաւոր և զգայուն նիւթերն եւս ուսումնասիրէ : «Արդարեւ նա պարտի աստեղաց չարժանն , նոցա արագութեանց , նոցա մեծութեանց , նոցա ձեւին և

(1) Անաթոլիոս Աղէքսանդրեացի , եպիսկոպոս Լաթակիեայ . 270 թուականին Անտիոքի ժողովոյն ներկայ էր :

նոցա հեռաւորութեանց ևս ծանօթ ըլլալ : Նա պարտի աչաց տեսութեան զանազան փոփոխութիւնքը գիտնալ, թէ ինչու համար հեռաւոր նիւթերը փոքր կ'երեւան և մօտակայք մեծ ևայլն » : Միով բանիւ այս կղերականը ամեն իրաւունք կ'ուտայ գիտնոց :

Ուր էր թէ Ս. Պետրոսի յաջորդներն ալ այսպէս մտածէին և իրենց դարաւոր բռնաւորութեամբ գիտուններն ու գիտութիւնը չի շարժարէին կրօնքի դէմ հրատարակելով ինչ որ պարզապէս իրենց շահերուն դէմ էր :

Յ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

## Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Եւրոպացի մատնադրաց կենսագրութիւնը գրողները մասնաւոր խնամք կը տանին հետազօտելու անոնց առանին կեանքն : Հետաքրքրական կէտեր երեւան կուգան այս խուզարկութիւններէ, որոնցմով կրնան բացատրուիլ շատ անգամ մատնագրին գործերն : Հարկ կը համարենք մերթ ընդ մերթ ծանօթացնել «Մտասի» ի ընթերցողաց հաշակաւոր մատնադրաց ոմանց առանին կեանքն, ուստի այժմ Ալէքսանդր Տիւմա որդւոյ առանին կեանքին վրայ տեղեկութիւններ կը հաղորդենք, թարգմանելով զայնս Ժիւլ Զօլի վերջերս հրատարակած «Փարիզցիք երենց տան մէջ» անուն գրքէն :

## ԱԼԷՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ ՈՐԴԻ

Երբոր մեռնիմ, ես չեմ ուզեր  
Որ զիս դընեն շիրմի մը տակ .  
Ի միջավայր հերկեալ արտի,  
Ուր են ախօք, թո՛ղ զիս թաղեն :  
Մինչ կենդանի՝ ոչինչ ըրի .  
Մըխիթարուած այլ կը մեկնիմ,  
Երբ յետ մահու՝ ես կարենամ  
Յորենի հատ մ'իսկ արտադրել :

Վերոյգրեալ ոտանաւորն Ալէքսանդր Տիւմա որդւոյ կտակը կը կազմէ : Գրուած էր հեղինակին մէկ կենդանագրոյն տակը, և ես անկէ օրինակած եմ : 1863 օգոստոս 15 թուականը կը կրէ, թուական որ սակայն

նշանակութեան արժանի բան մը չյիշեցներ ինձ : Այլ կը խոստովանիմ թէ բնաւ մտքս չէր անցներ որ Պ. Տիւմա մահուան մասին բանաստեղծութենէ այսքան զուրկ կարծիքներ ունենայ : Հոգեփոխութեան պատրուակաւ հերկեալ դաշտի մը մէջ թաղուելու փառք ունենալ՝ բաւական թեթեւ գաղափար մ'է որ, դէթ մինչեւ այժմ, մարդկային շատ քիչ ուղեղներու մէջ ծնունդ առած է : Բայց Պ. Տիւմա պնտած է ընկերային ամեն գիտութիւններն, ու խնդիրներն և մարդկային ու երկրային ամեն իրերը, և ամենուրեք ոչնչութիւն գտած է : Աստի ունեցած է, անտարակոյս, ինքզինք սա գաղափարով մխիթարելու պէտքը թէ՛ ինչ որ իրմէ պիտի մնայ, դէթ պիտի ծառայէ այլոց հաց տալու :

Պ. Տիւմա այդ մահահամբոյր ցնորքն յօրինած է արուեստական հոյակապ գործերով լի աշխատութեան սենեկի մը մէջ, որոյ պատուհանները երբեմն Վալիրամի ծառուղւոյն վրայ կը բացուէին :

Անկէ ի վեր, Պ. Տիւմա այլուր փոխադրած է իւր բնակարանը : Մառուղիներէ բաժնուիլ կարի դժուար գալով իրեն, փոխանակ Վալիրամի ծառուղւոյն՝ ընտրած է Վիլիէրի ծառուղին, փաշիպեան այդ նորանշան փողոցն որ տարօրինակ արուարձանի մը պէս կ'սիսի և արեւելեան մայրաքաղաքի մը եւրոպական թաղին նմանելով կը վերջանայ :

Արդարեւ, երբ կը մոտենա Վիլիէրի ծառուղին, ի սկզբան անդ տեսնելով նալարափաճառի խառնութիւններն և գինեվաճառները՝ կը կարծես թէ մին է Փարիզի շրջակայից այն սոսկալի արուարձաններէն, որք՝ ի հեռաւոր ծայրս Փարիզի՝ աննշխարելի կը լինին մոխրադոյն դաշտանկարներու մէջ, յորս բարձրադիտակ ծխնելոյքը ցան և ցիր սփռուած են :

Բայց խօսիչն հասարակաց պարտեզ մը ոտից ներքեւ կը տիտէ իւր դալարադեղ թանձր գորգն, հեռանկարը կ'ընդարձակի, և կարծես յերկրէ կը բլիսին ամառանոցներ, ապարաններ, պալատներ, որք յանկարծ կը փոխադրեն զքեզ ոսկեգօծ շրջանակի մէջ պարփակեալ աշխարհ մը, որոյ շէնքերու ազգի ազգի ճարտարապետութիւնը կ'իմացնէ թէ ո՛րպիսի տարբեր ժամանակներու ձեռակերտ են :

Պ. Ալեքսանդր Տիւմա որդւոյ ապարանք ծառուղւոյն ամենէն չնորհալի անկիւններէն մին կը դրաւէ (թիւ 98) :

Նոյն իսկ գետնայարկէն սկսեալ, այցելուն կ'ապալի արուեստական գործերու զարմանալի ճոխութեամբ, որք Պ. Տիւմայի սրբաբախարը տեսակ մը թանգարանի կը վերածեն : Պ. Տիւմայի բնակարանն անձուկ է պարունակելու համար իւր բոլոր արուեստական գործերն, ուստի իւր պարտեզին մէջ հաստատած է ֆլաման ձեւով սիրուն պորմ մը, որ կը ծառայէ իւր յարակից մասն թանգարանին :

Այդ յարակից մասն, իւր աշխատութեան սենեկէն երկու քայլ հեռի, « Ախար » ի հեղինակին կենաց մէջ չկարծրւածէն աւելի կարեւոր գեր մը կը խաղայ : Վասն զի Պ. Տիւմա ամեն վայրկեան պէտք կ'զգայ իւր պատկերները տեղափոխելու՝ որպէս իւր կարասիներն, երազանցուկ քիմահաճոյքի մը համեմատ զայն ի մի վայր համախմբելու և իւր աշխատութեան դահլճին մէջ իսկ այլազան հեռանկարներ ստեղծելու : Այդ կարծեմ թէ այդ ալ այն մենամոլութիւններէն մին է, որով կը յայտնէ թէ ինք ո՛րչափ խղճի մտքը համապատասխան է ամեն բանի յողորմող վիճակ մ'ունենալուն : Գետնայարկի դահլճն, ինչպէս նաեւ հեղինակին սիրելի փոքրիկ սրահն իրենց զիրքով իսկ դիւրութիւն կ'ընծայեն այդ յարապակի տակնուվրայութեան, որ կարծես անհրաժեշտ պէտք մը դարձած է հեղինակին անհանդարտ բնավորութեան :

Եթէ ուզէի Պ. Տիւմա որդւոյ սրահները զարդարող բոլոր գեղարուեստական գործերը մի առ մի թուել այստեղ մասնաւոր դասակարգութեան մը համեմատ, բաւական պիտի չլիթէի, վասն զի նախ պատկերաց անուններն ահագին տեղ պիտի բռնէին : Ասկէ զատ, եթէ մէկն ուզէր ստուգել թէ ո՛րքան ճամբիւր է իմ նկարապրութիւնս և այս նպատակաւ այցելութեան երթար Պ. Տիւմայի տունը, պիտի չլիթէր, վասն զի գեղարուեստական գործերը չպիտի գտնէր այն տեղն ուր նշանակէի :

Ասոր համար է որ կը շատանամ հարեւանցի կերպով յիշատակել Մէսոնիէի, Թասէրի, Պոտրիի, Հէնէրի, Վոլոնի, Բուսոյի, Տիւմայի, Ժոնկընիւի, Գորոյի, Տիւրքի և

այլոց գործերն, և այս ամեն պատկերներն իրարու մօտեցած, սեղմուած, դատարկ տեղ մը չեն թողուր, այնպէս որ մարդ խիղյն կ'զգայ թէ Պ. Տիւմա երբեմն երբեմն կը հարկադրի անոնցմէ մի քանին ծախել՝ այլոց տեղ բանալու համար :

Նոյն իսկ սանդուղն արուեստական գործերով ծածկուած կ'երեւի, և բուն իսկ այս նպատակին ծառայելու համար շինուած պիտի թուէր, եթէ չզիտնայինք թէ սանդուղին գոյութեան աւելի բացայայտ նպատակն է վերին յարկն առաջնորդել : Ստոյգը սա է որ պատկերները՝ սանդուղը պատելէ յետոյ՝ տարածուած են մինչեւ իսկ անկողնոյ սենեակին որ առաջին յարկը կը գտնուի, և վերջապէս գրաւած են դնդամուղի սրահն, ուր իրենց ամենէն աւելի ակներեւ պաշտօնն է գրգռել զարմացումն Պ. Տիւմայի Կարճապաշի դասատուին, որ Հանրապետութեան Նախագահին ալ միանգամայն դասատու է :

Այդ փութամ գետնայարկն իջնել, և անցնելու ատենս բարեւելով Ժանինի մէկ կիսարձանն որ Ալեքսանդր Տիւմա հօր մարմարեայ կիսարձանին դէմ առ դէմ դրուած է, դալդաղողի կը մոնեմ աշխատութեան սենեակն, որ ինչպէս ըսի, թանգարանի հըրաշալի անկիւն մ'է (1) : Անդ, ԺԼ. դարու ակօսածեւ թիկնաթոռի մը մէջ և գրքերով, թուղթերով, կիսարձաններով, արձանիկներով բեռնաւորեալ մեծ գրասեղանի մ'առջեւ բազմած է Պ. Տիւմա, իւր առջեւ ունենալով Թիկնա Պ. Տիւմայի կիսարձանն զոր Պարբօ շինած է և իւր գլխուն վերեւ իւր կենդանադիրն ի Մէսոնիէէ, որ Գաթալիա Տիւմա հեղինակը ներկայացուցած է մոտաւոր մարդու իւր սիրելի դիրքին մէջ, սրունքներն և ձեռքերը խաչածեւ,

(1) Ալեքսանդր Տիւմայի աշխատութեան ճշմարիտ սենեակը կը գտնուի վերնայարկն, իւր նշնջարանին քով : « Հո՛ն միայն, — ըսած է Պ. Ժիւլ Բլարոսի մտերմական նամակի մը մէջ, — չընդատուեալ Թասէրի գործերով՝ որոց գեղեցկագոյն հաւաքածոյ մ'ունի իւր բոլորակը, կը գտնես բուն իսկ Ալեքսանդր Տիւման : Հո՛ն, ինք իրեն կը վերաբերի, ոչ ոք ներս կը մտնէ : Բոլորովին իւր գործով զբաղած է : Զմեռն ինք կը վառէ իւր կրակն, սպասաւորը կանչել ստիպելով : — « Քսան տարի կայ որ, կ'ըսէր ինձ, երբեք սպասաւորս կանչած եմ իմ պէտքերս հոգալու համար : »

և կոտորելապէս երջանիկ մարդու սէդ ու անկեղծ նայուածքովը :

Երբ չգրէ , այդ նայուածքը կը պտըտցընէ այն նախապատիւ համարած պատկերներու վրայ զորս սնդ հաւաքած է , քանի մը ընդօրինակութիւններ Մէսոնիէի և Վոլոնի դորժերէն , Տըլաքըուայի մէկ հեծեալը , Գորոյի մէկ կէնը , Ժիւլ Տիւրբէի մէկ դաշտանկարը , և վերջապէս Թատէրի Սաբէ Աստի փոքր-թիւնը մեծաշուք պատկերը : Յայտնի է թէ Պ. Ալէքսանդր Տիւմա մեծապէս կ'աքանջանայ այդ խեղճ Թատէրի վրայ , զոր ստիպան երբէք ձանշած չէ , և թէ այս վերջնոյն անձնաստղանութենէն յետոյ Մոնթաբնասի գերեզմանատան մէջ չիրիմ մը զնեց անոր :

Սենեկին մէկ անկիւնը կը տեսնուի կաղնի վայտէ փոքրիկ կարասի մը , ծածկուած հնութեամբ , բլւրեղներով , յախճապակիներով : Առաջին կարասին է այն , գրած է Տիւմա , որ դպրոցէն ելնելու ատեն իրեն սեփականութիւնը եղած է : Կը թուի թէ այդ կարասին և այն սեղանն որու վրայ կը տեսնուի Բաֆայէի մոմեղէն մէկ Աստուածածնայ պատկերին ընդօրինակութիւնն , միակ առարկայներն են որ կը մնան այն ժամանակէն , զոր բարբառստիկ կ'անուանէ Տիւմա :

Պարտէզին վրայ նայող երկու պատուհանաց մէջ տեղ կը գտնուի մատենագարանը , լի դասական , գիտական , մանաւանդ ընտելութեան գրքերով , յորս ( ինչպէս Տիւմա ինք ալ կը խոստովանի ) հետաքրքիր ոմն կրնայ գտնել այն բնագիտական-տարրաբանական տեսութիւնները , զորս հեղինակը կը սիրէ մոցնել թատերգութեան մէջ , վիպասանութեան մէջ , այժմեան բարոյականի մեծամեծ խնդրոց մէջ , վերջապէս ամենուրեք , ի բաց առեալ իւր կենաց մէջ , յորմէ գոհ կը յայտարարէ ինքզինքն առանց գիտութիւն . . . ոչ ալ չարածճիւղութիւն խառնելու :

Զարածճիւղութիւն կը խառնէ այն ատեն երբ մեզ կ'իմացնէ թէ գետնին վրայ , իւր ոտից ներքեւ , այսինքն իւր դրստեղանին ներքեւ կը գտնուին Լիդրէի , Թրէվոլի , Լաֆէյի , Պուլէի , Վաբըրոյի , Բոպէնի բառարաններն , և նոյն խի Սուվրոնի արհեստական բառերու փոքրիկ բազմաթիւ , որոց օրհանգիւսէ հազար բառերը բերնոց քնքեր

Թէնճիւ Կիլիէ , Բաւեր՝ զորս այսօր ոչ ոք գիտէ : Պ. Ալէքսանդր Տիւմա , որ անցողակի կը յանձնարարէ այդ փոքրիկ հատորը , կ'ուզէ մեզ կարծեցնել թէ ինք գիտէ այդ տասնեւհինգ հազար բառերը : Լուսաբանելի կէտ մ'է այդ , որովհետեւ մեր օրերը , մարդ մը որ տասնեւհինգ հազար արհեստական բառ գիտէ և այսու հանգերձ կը շատանայ վէպերու թատերախաղեր գրելով , որպէս Պ. Տիւմա Գրի , որոց գրական բարձր արժէքի մասին ըսելիք չունիմ , բայց որոց մէջ միջոց չկայ այդ արհեստական բառերէն հարիւրի չափ միայն մոցնելու , այդպիսի մարդու մը վրայ որքան քանջանանք , դարձեալ քիչ է :

Այլատուութեան սեղանէն քիչ հեռու մեծատարած բազմոց մը գրուած է , միշտ պատրաստ ընդ ունելու ո՛չ թէ այցելուներ , այլ օրուան լրագրեր , տետրակներ , ձեռագրեր : Վերջապէս գրասեղանին վրայ , ուր խառն ի խառն կը գտնուին այն ամեն բաները , զորս Էօփէն Աքրիպ կը կոչէր « Գրեւ-համար հարկ եղած » , Տիւրոյի կրտսերանի մը և Տիւմա հօր մէկ արձանիկին մէջտեղ , որ չ'իմուած է իւր վայելուն երիտասարդութեան ատեն , աստ անդ սփռուած են ամեն ձեւով և ամեն գիրքով ձերբակ ու կապոյտ թուղթեր , զորս Պ. Տիւմա առատապէս ամեն կողմ կը տարածէ , աշխատելու եռանդ տալու համար իրեն . վասն զի , կ'ըսէ , հեղինակի մը համար ոչինչ գրելու աւելի ախորժակ կ'ազդէ որքան լաւ թուղթը : « Աստուի ձագերու համար ո՛րքան անդիմադրելի հրապոյր ունի կաթով լի փոքրիկ սկաւառակ մը , նոյն հրապոյրն ունի լաւ թուղթն ալ դրագէտին համար » :

Թո՛ղ այդ պէս լինի : Նմանօրինակ մենամտութիւն մ'ունի Պ. Ժիւլ Բլարի : Եւ այս մեզ կը ցուցնէ թէ մինչդեռ Աքրիպի գիւցապանց համար « Գրեւ-համար հարկ եղած » միշտ միեւնոյն նիւթերէն կը բաղկանայ , այնպէս չէ անոնց համար որոց արուեստը մատենագրութիւնն է : Ընդհակառակն ազոնց քով « Գրեւ-համար հարկ եղած » ուրիշ խնաստ մ'ունի , որ կը փոփոխի իւրաքանչիւր մատենագրի համար , և որ երբեմն կ'ենթադրէ յոյժ տարօրինակ , եթէ ոչ անհեթեթ իրեր :

« Գրեւ-համար հարկ եղած » Պիւթոնի համար ժանեկազարդ թիկնոցներ էին , Էօփէն

Սիւրի համար՝ կանանց խնձորագոյն ձեռնոցներ, Բոնսոն տիւ Թէրայի համար՝ խամաճիկներ (քառալու), Վիլթոր Հիւկոյի համար՝ դաւաթ մը թարմ ջուր է, Պաուպէ ԹՕր-վիլի համար՝ դուռնաւոր թանաքներ, կարմիր, կապոյտ և այլն, Սարսէյի համար՝ սադի փետուրէ ալէկ կտրուած գրիչ մը՝ ստամբսի ցաւերն արդիւլելու հարկ եղած նիւթոց հետ, Չոլայի համար՝ գունաղեղ դուլպա և հողթթափներ, Մաքսիմ տիւ Գանի համար՝ արեւելեան համբիւ մ'ա գլանիկ մը . . . բայց կը տեսնեմ որ վերջը չսկսի գայ :

Այս շարքին մէջ կրնամ գտնել նաեւ Հայտն, որ երաժշտութիւն գրելու համար մատը կը դնէր այն ականազարդ մատանին զոր նուիրած էր իրեն Մեծն Ֆրէտէրիք, և Վալինէր, որ կ'աշխատէր միայն պարեգօտ հագած, որոյ գոյներու տեսակները կրնային հաշուուիլ երաժշտութեան բոլոր խաղերուն հետ :

Սակայն մոռցայ ըսել թէ կայ բան մը զոր Ալէքսանդր Տիւմա ոչ նուազ կարեւոր կը համարի քան թուղթին ձեւն ու գոյնը, այդ է ոտքերը տաք պահել, և զայս կը հաստատէ իւր գրասեղանին տակ սեւ արջի գեղեցիկ մորթի մը յարատեւ ներկայութիւնն, առողջապահական զարդ, յորմէ իւր ոտքերը վայրկեան մ'իսկ չեն բաժնուիր, երբոր նըստած է :

Եւ այժմ ձեր մոռաց առջեւ բերէք այդ դրուատեալ հեղինակին, այդ հզօր անձն որ առ ինքն դիմողներուն հետ կը վարուի քաղցրութեամբ իբր ընկերակցի մը հետ, և որ ներողամիտ ու մտերմական խտուրտներուն, այդ բարոյախօսն՝ գրգեալ և մայփայեալ կանացի ակումբներու մէջ, չըջապատեալ կիներէ զորս յօժարակամ կը խոստովանցնէ և ի հարկին կը փրկէ, այդ երջանիկ ժառանգն նշանաւոր անուան մը զոր ամենայն վայելչութեամբ կը կրէ, և որուն իւր փառքը ոչինչ կը պարտի, եթէ ոչ հակառակն այն յատկութեանց, զորս այդ անուան տէրն ունէր, — ձեր մոռաց առջեւ բերէք այդ մարդը, չըջապատեալ փարիզեան կենաց ամեն չըքղութիւններէն, ոտները պատատեալ արջի գեղեցիկ մորթի մը մէջ, ձեռաց մէջ ձմրակելով ամեն ձեւէ և ամեն գոյնէ թուղթեր, գլուխը թեթեւապէս մէկ կողմ ծռած, իբր թէ մէկ ականջով ուն-

կընդրէր ձկներու խորհրդաւոր աշխատութեան բղղիւնին, և միւսով սրտին մշտնջենական ցնորքներուն, նայուածքը պարտեցնելով այժմեան արուեստին հրաշակերտաց վրայ. — ձեր մոռաց առջեւ բերէք մանաւանդ յինքն գտնուող բանաստեղծն որ կ'երագէ հերկեալ դաշտի մը մէջ թաղուիլ յառաջիկայ տարուան հնձոց կարեւոր ձեռնտու մը լինելու համար, — ձեր մոռաց առջեւ բերէք այս ամենն, և պիտի ունենաք Ալէքսանդր Տիւմա որդւոյ հաւատարիմ նկարագիրն իւր առտնին կենաց մէջ :

Թաքճ.  
Լ. Բ.

## ՆՈՐԱՎԷՊ

### ՓՈԹՈՐԻԿԸ

Փոթորիկն որ շարժուա Մանչի ծովեզրը կոծեց, ընտանեկան սրտայոյզ տեսարանի մը պատճառ եղաւ :

Այդ տեսարանին վայրը Նորմանտիոյ մէկ փոքրիկ նաւահանգիստն է :

Տիկին Պոտուէն հարուստ կալուածատէր մ'է : Իւր հայրն, աղարակապան, հարըստութիւն մը թողած էր զոր իւր ամուսինն անշուշտ պիտի վատնէր, եթէ մահը ժամանակին վրայ չհասնէր : Այրի մնալով իւր միամօր զաւկին հետ, տիկին Պոտուէն միտքը դրած էր ամուսնացնել զնա հարուստ աղջկան մը հետ և այսպէս իւր տունը մեծցնել :

Գժբաղդաբար, Լուի Պոտուէն սիրահարեցաւ աղքատիկ ձկնորսի մ'աղջկան, և որոշեց ամուսնանալ անոր հետ : Այրին մերժեց իւր հաւանութիւնը տալ : Լուի բնաւ չփոխեց իւր որոշումը, — Նորմանտացիք յամու են : Պատերազմը տարի մը տեւեց, յորմէ վերջ մայրն ըսաւ օր մը. « Ամուսնացիր եթէ կ'ուզես, բայց ես բնաւ չպիտի տեսնեմ կինդ և դուն ինձմէ սու մ'իսկ չպիտի ստանաս, քանի որ կենդանի եմ » : — « Ինչպէս որ կը հաճիք, » ըսաւ Լուի : Եւ ամուսնութիւնը տեղի ունեցաւ :

Հինգ տարիներ անցան և երեք փոքրիկ տղայք աշխարհ եկան : Լուի ձկնորսութեան կ'երթար իւր աներոջ հետ, և իւր կինը տը-

ղաքները կը սնուցանէր : Իրաւ է թէ քիչ մը նեղութիւն կը կրէին, բայց սէրն ամեն բանի հանդուրժել կուտայ, և չէին տրտնջար : Նոյնպէս չէին դիմեր տիկին Պոտուէնի : Կիրակի օրը, երբ անոր կը հանդիպէին պատարագէն ելնելէ վերջ, կ'ողջունէին, որովհետեւ պարտականութիւն մ'էր սա : Այն ատեն տիկին Պոտուէն կը տնկուէր իւր թըլադոյն մեկնոցին մէջ և քայլերը կ'երազէր առանց պատասխանելու, իբր թէ կրուկը օձէ մը խայթուած լինէր : Ո՛չ այցելութիւն կուտային, ո՛չ նամակ կը գրէին և ո՛չ ո և է յարաբերութիւն ունէին միմեանց հետ : Ոչինչ, բայց եթէ այն ողջոյնն զոր երիտասարդն ու մանկամարդ կ'իյնը կուտային, և որուն չէր պատասխաներ ծերունի կ'ինն :

Անցեալ չորեքշաբթի օր, մերիկը կը դուռար ծովուն վրայ և կը դղրդէր ծովեզերեայ տուները :

Տիկին Պոտուէն միայնակ կ'ապրէր իւր Աննէթ սպասուհւոյն հետ, մին Նորմանտիոյ լեռնադաշտերու այն խոշոր աղջիկներէն, որք բամբակէ գտակ դնելու համար ստեղծուած են կարծես :

Աննէթ ձեռները միացուց և ըսաւ .

— Ի՛նչ սուկալի օգ, տիկին : Դատերուն սիրտը հիմա սրտաբոլի մէջ լինելու է :

— Որո՞նց սիրտը, ըսաւ այլին որ ըստ իւր սովորութեան կ'երթեւեկէր, ամեն բանի դպչելով, առանց բանով մ'դրադելու երեւոյթ ունենալու :

— Մնողներն այն անձանց որք ծովուն վրայ կը գտնուին :

Տիկին Պոտուէն կանգ առաւ :

— Բա՛ւ է, ըսաւ չոր կերպիւ :

Եւ կարելու գործ մ'առաւ . և որովհետեւ երկինք մթադոյն էին և լոյսն աղօտ, դնաց նստիլ պատուհանի մը քով :

Աննէթ, յոտին, երեսը ապակիին դրած, փողոցը կը դիտէր : Որովհետեւ լուսնիւն պատուիրած էին իրեն, երբեմն երբեմն միայն կը խօսէր, ըսելով .

« Օ՛հ, փոթորիկը գետին նետեց Պ. Պէրթրանի ծխնելոյզը . . . Պ. Դարտօնի վանդակաբանին ինկաւ . . . Ո՛հ, դրացիները փողոց կ'եննեն . կ'ուզեն դիտնալ թէ ի՛նչ կ'անցնի հոն, հեռուն :

— Որքան շատ 'կը խօսիս, մրմնջեց այլին : Աննէթ ստիպուեցաւ լռել, բայց իւր քի-

թը դամքան դղամ կը տախակցէր ապակիին վրայ :

— Ո՛չ, պոռաց վերջապէս ոտքը գետինը զարնելով, երբէք տեսած չէի այս տեսակ փոթորիկ :

Տիկին Պոտուէն իւր կարը ծալեց և վերստին սկսաւ քալել :

Հեռուէն կը լուէր մերիկն ահեղ սուլումն, և մերթ ընդ մերթ աղաղակներ, երկաթի ձանչիւններ, և պատերուն զարնուող վանդակաբաններուն աղմուկը :

Ծովն յոյժ փոթորկայոյզ լինելու էր :

Այլին չիտակ սպասուհւոյն քով եկաւ :

— Ե՛հ, ըսաւ, որովհետեւ հետաքրքիր ես, մոռնալներդ հաղիւր և ուրիշներու նըման դնա տես թէ ի՛նչ կ'անցնի :

Աննէթ վայրկեանի մը մէջ պատրաստ եղաւ :

Դռնէն դուրս կ'ենէր, երբ տիկին Պոտուէն ըսաւ .

— Շուտով վերադարձիր և ըսէ ինձ թէ ի՛նչ կայ :

Ծերունի Նորմանտուհին վերսկսաւ երթեւեկել սենեկին մէջ :

Սենեկին մէկ ծայրէն միւսը կ'երթար, ձեռները խաչածեւ, սրկունքները սեղմած, և ըստ իւր սովորութեան քննելով այն ամեն իր որուն կը հանդիպէր անցնելու ատեն :

Տասն վայրկեան անցաւ :

— Աննէթ ուշացաւ . . . տակաւին չվերադառնար, կը մրմնջէր ակույններուն մէջէն :

Հովը երթալով սաստկացած էր, և իւր մռնչիւնը կը լուէր միայն :

Յանկարծ տիկին Պոտուէնի նայուածքն յառեցաւ սենեկին մէկ մուկի անկիւնը, մանկան անկողնոյ մը վրայ :

Այդ տուններուն մէջ ամեն բան կը սահէ և իւր տեղը կը թողուն :

Այդ անկողին իւր տղունն էր . . . իւր տղուն որ այժմ ծովուն վրայ կը գտնուէր :

Ժամէ մ'ի վեր անոր վրայ կը մտածէր :

Բայց իւր մտածման մէջ մեծցած Լուին էր որ կը ներկայանար, քսան և հնգամեայ ձկնորսը, մարդ եղած, յաղթանդամ և յաղթահասակ, որ « ինչպէս որ էր հաճէ » ըսեր էր, երբ արգիլած էր իրեն ամուսնանալ, և որ սակայն ամուսնացեր էր :

Այժմ, մանուկն էր զոր կը տեսնէր վե-

ընտանիք, իւր մետաքսեայ մագերէտով, իւր փոսաւոր կարմիր այտերով և իւր կապոյտ աչերով: Կը յիշէր անոր առաջին ճիշերը, ծիծաղներն, հնչուն համբոյրներն և այն դադարները զոր ինք կազմած էր անոր օրրանին քով:

Մարդ կրնայ Նորմանտացի լինիլ, հարուստ լինիլ, յամառ լինիլ, քարէ սիրտ մը ունենալ, այլ այս բաները կը յուզեն սիրտն եթէ հովը կը դուռայ:

— Ո՛հ, Աննէթ չվերադառնար:

Ինք ալ իւր մեկնոցն առաւ և դուրս ելաւ: Փողոցին անկիւնէն դարձած ատեն, խումբ մ'անոր դիմացն ելաւ: Այդ խումբ շրջապատած էր երկու երեք ձկնորսներ ջրաթուրմ հանդերձներով, տղամթաթաւ մեծ կոշիկներով, ձեռքերնին և երեսնին արիւնաշաղախ: Կանգ առաւ և խեղդուկ ու խռպոտ ձայնով մը հարցուց.

— Վերադարձա՞ն:

Հոն գտնուողներէն մին աչքովը խորհուրդ հարցուց միւսներուն և պատասխանեց:

— Այո:

Տիկին Պոտուէն իւր ճանքան շարունակեց: Այն ատեն նաւաստիներէն մին խումբէն բաժնուեցաւ և անոր ետեւէն վազեց:

— Տիկին Պոտուէն, տիկին Պոտուէն, ո՛ր կերթա՞ր այդպէս:

— Հոն:

Եւ ծովը ցոյց կուտար:

Մարդը մեկնոցէն բռնեց և կեցուց զայն:

— Ի՞նչ հարկ երթալու, ըսաւ: Օղը ազէկ չէ, տուն վերադարձէք, որովհետեւ ամենքս ալ դարձանք և ծովուն վրայ մարդ չմնաց:

Տիկին Պոտուէն աչերն անոր աչերուն յառեց:

— Ամենքն ալ, հարցուց:

— Անտարակոյս:

— Երգում ըրէ:

Նաւաստին շիտեցաւ:

— Իրաւ որ, ըսաւ, հոս ծովեզր չեւոյններն անշուշտ Իբորդ . . . կամ Ֆէքան ելած են, ո՞վ գիտէ:

Տիկին Պոտուէն իւր մեկնոցը քաշեց և ուզեց մեկնիլ: Նաւաստին նորէն կեցուց զայն:

Աննէթ դիմացէն կուգար, բոլորովին յուզուած և տակնուվրայ եղած:

— Ո՛հ, տիկին, ո՛հ, դուք տեսնելով իւր տիրուհին, մի՛ երթա՞ք:

Ծերունի կնոջ անդամներն սկսան դողդուլ, իւր երեսին տոգոյն դոյնը մոխիր դարձաւ: Իւր աչերը փակուեցան, և ըստպատուհւոյն վրայ կրթնեցաւ չիյնալու համար:

— Յանցանքը իմն է, յանցանքը իմն է, կը կրկնէր, և իւր ակռայները կը կափկափէին մինչ այս խօսքերը կ'արտասանէր:

Ուզեցին տուն մը մտցնել զայն: Մերժեց:

— Աննէթ, ըսաւ, կ'ուզեմ տեսնել զանոնք:

Հրաշիւք իմն վերատին գտաւ իւր ոյժն, և երկու կանայք այն տան ճանքան բռնեցին ուր կը բնակէր Լուի Պոտուէն:

Աննէթ մատը դրան պարզունակին վրայ դրաւ. տիկին Պոտուէն ներս մտաւ:

Ներքնակողմը կը նմանէր ամեն ձկնորսներու տանց ներքնակողմին:

Կապոյտ վարագոյրներով շրջանակեալ մեծ մահճակալի մը ոտքին տակ երկու փոքրիկ անկողիններ կային օրրոցով մը բաժնուած: Ծայրագոյն մաքրութիւն մը կը պատէր այդ բոլոր իրերը:

Մանկամարդ կիներ դեռ նոր ելած էր իւր վերջին տղաբերքէն: Նստած էր, ամենէն փոքրը իւր ծունգերուն վրայ բռնած, և միւս երկուքը, բոլորովին խռոված, իւր դողնոցին տակ մտած էին: Անհանգստութիւնն աւելցուցած էր անոր տխրութիւնը: Չկրնալով դուրս ելնել, իւր ծնողքը զրկած էր լուր առնլու, և կ'սպասէր, հազիւ թէ չնչելով եւ ջերմաջերմ արտասուելով:

Իւր սկսուրին ներս մտնելը տեսնելով, ջանաց ոտքի վրայ ելնել մրմնջելով.

— Տիկին . . .

Ծերունի կիներ շիտակ անոր գնաց և պատասխանեց.

— Աղջիկս . . .

Ապա, երկու տղաքները թեւերուն մէջ առաւ, և սկսաւ գրկել զանոնք հեկեկելով: Զսպուած հեծկտանքները պոսթկացին:

— Հէ՛գ էակներ . . . Միթէ . . . չէ՞ք գիտեր . . . Ո՛հ, Աստուած իմ . . .

Յանկարծ փողոցին մէջ ձայներ լսուեցան, ուրախութեան ձայներ:

Դուռը վերատին բացուեցաւ: Ազդականներու և բարեկամներու խումբի մը գը-

լուխն անցած լուի սեմին վրայ կանգնած էր:

— Աւասիկ, աւասիկ, կը դռնէին ձայներ:

Ի մի վայրկեան ամեն մարդ ոտքի վրայ ելաւ: Մանկամարդ կիներ դէպ յիւր ամուսինը սլացաւ, մանուկները դէպ իրենց հայրը վազեցին:

Տիկին Պոտուէն միայն իւր տեղը մնաց, անշարժ, նման արձանի մը:

Ձկնորսը տեսաւ զայն:

Իւր գլխարկը նետեց և յառաջացաւ ըսելով.

— Մայր իմ:

Տիկին Պոտուէն իւր թեւերը բացաւ:

ԹՈՆԻ ՌԵՎԻԼՈՆ

## ԶԱՆԱԶԱՆՔ

### ԼՈՆՏՐԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՏՈՒՆԸ

Կրնա՞ք արդեօք ձեր մտաց առջեւ բերել թէ ի՞նչպէս է Կեդրոնական նամակատունն այդ մեծատարած քաղաքի մէջ. — անշուշտ ո՛չ: Ուրեմն երթանք Միջնաքաղաքն և այդ ահագին հիմնարկութեան քարտուղարին հաճոյակատարութենէն օգուտ քաղենք մեր հետաքրքրութիւնը դոհացնելու համար: Նախ և առաջ պարտ անձին կը համարիմ յառաջագոյն ծանուցանել ձեզ թէ զիտելու արժանի ամենէն հետաքրքրաշարժ ժամանակը իրիկուան ժամ վեցին է: Ժամացոյցը վեց զարնելուն պէս, այլ եւս նամակները չեն ընդունուիր, բայց եթէ կրկին գին վճարելով, ապա թէ ոչ հետեւեալ առուր կը մնան: Կանգ առնենք ահագին սնտուկի մը մօտ, ուր կուգան կը թափուին անթիւ նամակներ աշխարհիս ամեն կողմն ուղղուած: Մէկ կողմը կը գտնուի  $4\frac{1}{2}$  կանգուն երկայնութեամբ և  $\frac{1}{4}$  կանգուն լայնութեամբ բացուածք մը, որոյ մէջ կը նետուին լոնտրայի և համայն Անգլիոյ ներքին թղթակցութիւններն, իսկ միւս կողմն ուրիշ բացուածք մը կ'ընդունի օտար երկիրներ ուղղեալ թղթակցութիւնները:

Ժամ վեցին մօտ հարկաւոր ձեռքեր կ'երկնան դէպ ի սնտուկն և բացուածքէն

ներս կը նետեն ամեն մեծութեամբ ծրարներ, լրագրեր, ամսագրեր, յայտարարութիւններ, և այլն: Կարծես թուղթի ջրվէժ մ'է որ կը հոսի սնտուկին մէջ: Մէկ հատ նամակ ձող անձինք յոյժ քիչ են. ընդհանրապէս ամեն ոք կը ձգէ մեծածաւալ ծրարներ: Ժամացոյցը կը յառաջանայ. ահա՛ կը հասնին զրամատանց և տուեալական տուներու թղթակցութիւններն, որք խոշոր պարկերու մէջ լեցուած են: Ի բըթթեալ ական սնտուկները կը լեցուն և անոնց տեղ ուրիշներ կը յաջորդեն: Սնտուկի մօտ նոյն պահուն սարսափելի իրարանցում մը կը տիրէ. ամեն ոք կը ջանայ առաջ անցնիլ չուշանալու համար: Բայց ահա ժամ վեց կը զարնէ. ամենայն ինչ լնցաւ և պողպատեայ կախարչը կ'իջնայ. այնուհետեւ եկող բոլոր նամակներն հետեւեալ առուր պիտի մնան:

Այժմ տեսնենք թէ ի՞նչ պիտի ընեն այդ լեցուն սնտուկներն: Ահա՛ անոնք կը տարուին կազի հարկաւոր կանթեղներով լուսաւորեալ ընդարձակ սրահ մը, ուր գրեթէ 900 պաշտօնեայներ պատրաստ են այդ նամակները դատակարարել. նախ և առաջ պէտք է անոնց վրայ դրոշմել նամակատան կնիքն և տարւոյն ու ամսուան թուականը: Մինչեւ այսօր թերեւս համոզուած էիք որ այդ գործողութիւնը ձեռքով կը կատարուի: Այլ այսօր յառաջ խնութիւնը ո՛չ մէկ արգելքի առջեւ կանդ կ'առնու, և յատուկ մեքենայ մը հնարուած է նամակաց վրայ կնիքն ու թուականը դրոշմելու: Մեքենայն մէկ անգամին կ'ընդունի 3-400 նամակ. բաւական է անիւր դարձնել, և ահա ամենայն ինչ պատրաստ է. մօտը դրուած ինքնաշարժ մեքենայ մ'ալ կը հաշուէ անցած նամակներու թիւը: Իմ այցելած օրս երեկոյեան մինչեւ ժամ 6.20, մեքենայն նշանակած էր 1,600,000 նամակ: Միջին հաշուով ամեն օր դրուած նամակներու թիւն է երկու միլիոն: Դրոշմուելէ յետոյ նամակները կը դատակարարուին այն ձանրու համեմատ, որով պիտի գրուին. իսկ ի լոնտրա ցրուելիք նամակները կը դատակարարուին թաղերու համեմատ: Այնուհետեւ կը մնայ միայն մեքենայն տեղ գրիւղելիք բոլոր նամակներն առանձին ծրարներով կապել, պարկին վրայ նշանակելով այն կայարանն ուր պիտի տար-

ուին : Թերեւս զարմանալ թէ բոլոր պար-  
կերը նոյն գոյնը չունին , և անոնց մէջ ու-  
շաղբութիւն կը դրաւեն կանաչները . — ա-  
դոնք կը պարունակեն ապահովուած ու դրա-  
մական նամակները :

Ամեն օր նամակատուն կը մտնեն ահա-  
գին քանակութեամբ նամակներ , որք յոյժ  
թերի , անկանոն և երբեմն բոլորովին անըն-  
թեռնյի հասցէներ , ունին : Հասցէներ կան  
որք իսկապէս առեղծուածներ են :

Նախ և առաջ պէտք է ի նկատի առնուլ  
որ Անգլիոյ մէջ բազմաթիւ վայրեր կան որ  
միեւեռնոյն անունն ունին , և այդ ամենա-  
մեծ դժուարութիւն մ'է , որովհետեւ նա-  
մանակատան պաշտօնեայն չէ կարող ճշ-  
դիւ գուշակել թէ նամակին տէրն ո՛ւր  
զրկել կ'ուզէ իւր նամակը : Բայց անդ-  
իսկան թղթատարութիւնը նոյն իսկ այս  
պարագայի մէջ ցոյց կուտայ իւր հիանալի  
ճարպիկութիւնն , և կը գուշակէ բուն իսկ  
այն տեղն ուր նամակին տէրը կ'ուզէ զրկել  
իւր նամակը : Մասնաւոր պաշտօնեայններ  
կան , որք զբաղած են այդ առեղծուածները  
լուծելու : Թղթատարական վարչութիւնն  
այդ հետաքրքրաշարժ հասցէներն ի մի վայր  
ժողովելով հաւաքածոյ մը կազմած է , որ մէկ  
հատիկ է իւր տեսակին մէջ : Նս այն տեղ  
տեսայ հասցէ մը զոր Ամբրիէի մէջ Լիվինկս-  
թըն գրած էր պղնձի թերի ծայրով՝ առ ի  
չդոյժ գրչի : Վեր ելնենք . այդ 900 մար-  
դոց տեսարանն , որք զբաղած են այդ մե-  
ծատարած քաղաքի թղթակցութիւնը դա-  
սակարգելու , յիշուի սքանչացում կը պատ-  
ճառէ երբ վերէն գիտուի : Ըսինք թէ վարը  
միմիայն նամակները կը գտաակարգուին :  
Վերնայարկի պաշտօնեայք ալ կ'զբաղին լրա-  
գրերով և փոքրիկ ծրարներով : Երբեմն եր-  
բեմն կը բանան զիրք մը կամ լրագիր մը՝  
համարուելու համար թէ արդեօք չե՞ն պա-  
րունակեր մաքսէ փախցուած աւարկայ մը ,  
որովհետեւ այդ բան յաճախ կը պատահի :

Երբ ամեն գործողութիւն աւարտի , նա-  
մակներով և լրագրերով լեցուն պարկերը  
կը բեռնեն զէպի համապատասխան կա-  
յարանը տանող կառքերը . ահա այդ կար-  
միադոյն կառքերն են , որոց երեկոյեան  
ժամ 8ին ամեն քայլի կը պատահի ի Լոն-  
տրա , և որք Լոնտրայի ամեն փողոցներէն

կը դիմեն զէպի կայարանները , որպէս զի  
պարկերը քանի մը բոսէէն յետոյ շարունա-  
կեն իրենց ճանքան զէպի աշխարհիս ամեն  
կողմերը : Երեք հազար հոգի կ'աշխատին  
Լոնտոնի հինգ միլիոն բնակչաց թղթակ-  
ցութիւնն աշխարհիս ամեն ծայրերը ցըր-  
ուելու :

## Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐԱՅ

10-16 ՆՈՅԵՄԲԵՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ինչպէս որ Անգլիոյ երեսփոխանաց ժո-  
ղովոյն մէջ Սըր Տրըմինտ Ուոլֆ , Լորտերու  
ժողովոյն մէջ ալ Արկայի Դոքսը վիճաբա-  
նութիւն մը յարուցին Պերլինի դաշնագրին  
61 և 23րդ յօդուածոց վիճակին վրայ : Լոր-  
տերու ժողովոյն վիճաբանութիւնը բաւական  
կարեւոր հանգամանք մ' ունեցաւ , ըստ  
որում մասնակցեցան՝ Արկայի Դքսէն զատ ,  
նաեւ Լորտ Կրանմիր և Պերլինի դաշնագրին  
հեղինակներէն մին , Լորտ Սալիսպորի : Աւե-  
լորդ է մանրամասնութեանց մէջ մտնել այս  
մասին :

— Երեսփոխանական ժողովոյ նոյեմբեր  
22ի նստին մէջ՝ Պ . Կլատտոն պատասխա-  
նելով Լորտ Նորթպրուքի տեղեկագրին եւ  
Անգլիական կառավարութեան ապագային  
մէջ ունենալիք աշխարհավարութեան վրայ  
ուղղեալ հարցման մը , հաստատեց թէ այդ  
տեղեկագիրը Եգիպտոսի ելմտական տագնա-  
պալից վիճակին կը վերաբերի :

Կառավարութիւնն ընդունելով Լորտ  
Նորթպրուքի առաջարկները , կ'զբաղի այժմ  
ելմտական ծրագիր մը պատրաստելու , որ  
պիտի լուծէ Եգիպտոսի ելմտական վարչու-  
թեան դժուարութիւններն , և որ մեծ տէ-  
րութեանց պիտի ներկայացուի : Պ . Կլա-  
տտոն , երբ պահանջեցին որ Երեսփոխա-  
նական ժողովոյ հաղորդէ այն միջոցները  
զորս կառավարութիւնը ձեռք առնուլ յար-  
մար կը դատէ , մերժեց՝ յայտարարելով թէ  
կանխահա կը լինի այդ անօրինութիւնները

ատելութեանց հաղորդուելէ առաջ երեսփոխանական ժողովոյ ցուցնել:

— Երեսփոխանաց ժողովոյն մէջ Պ. Ուտոլ նորէն կանանց ընտրութեան խնդիրն յարոյց: Իւր առաջարկ 8ի դէմ 29 ձայնիւ ընդունուեցաւ առաջին ընթերցմամբ, բայց խնդիրն երկրորդ ընթերցմամբ ընդունուելուն վրայ է, որ այս նստաշրջանի մէջ նոյնչափ անկարելի է որչափ նախորդին մէջ, զի Պ. Կլատտգոնի այն առարկութիւնը թէ նոր տարրերով խնդրել չուզեր իւր այժմեան ընտրական ծրագիրն՝ նոյն է այժմ, ինչ որ էր յառաջագոյն:

— Թայմզ լրագրոյ Կ. Պոլսոյ թղթակիցը կը հաստատէ թէ Անգլիա Բ. Դրան ուշադրութիւնն հրաւիրած է Վոսիօրի և Դարգանէլի չէղբութեան խղճան վրայ, որ արդիւնք է ռուսական ծալտեալ մարտանաւուց անցուղարձին, որք սլարբերաբար զօրք կը տանին ի Խաղաղական Ովկիանոս, եւ կըսէ թէ Անգլիա պատճառ ունէր զիտողութիւն քելու, զի եթէ այս վիճակ չարունակէ, օր մը Ռուսիա աւելի շուտով կրնայ Հնդկաստանի վրայ զօրք զրկել Վոսիօրի, Դարգանէլի եւ Սուէզի ճանքով, քան Անգլիա՝ օգնութիւն զրկել Հնդկաստան՝ Ճիպրալթարէն եւ Սուէզէն անցունելով: Սուէզի ջրանցէն ամեն անգործիւն մարտանաւ կրնայ անցունել, եւ եթէ Կ. Պոլսոյ նեղուցները բաց լինին Ռուսիոյ, այս անգործիւն Անգլիոյ վրայ մեծ առաւելութիւն կունենայ: Բ. Դրան առաջարկած է Ռուսիոյ՝ կարգադրութիւն մ'ընել, որուն համեմատ Ռուսիա Խաղաղական Ովկիանոս Ոչնչականներ եւ պահպան գինուորներ զրկելու ձեռնն ենք քեւ տարին 1,500 մարդէ աւելի չպիտի անցունէ նեղուցներէն, եւ նախապէս իմաց պիտի տայ զայս: Բայց Ռուսիոյ վայելած արտօնութեան այս չափաւորման ծրագիրը տակաւին կայսերական պալատէն չէ վաւերացեալ, որպէս զի պէտք եղած դիւանադատական ձեռնարկութիւնք լինին ըստ այնմ: Իսկ Ռուսիա, ընդհակառակն, Բ. Դրանէն արտօնութիւն կը խնդրէր «պարբերաբար կանոնաւորապէս» Վոսիօրէն անցունելու գինուորական մեծ փոխադրանաւեր, որք զօրք եւ քաղաքական աքսորեալներ պիտի փոխադրեն ի Խաղաղական Ովկիանոս: Այս փոխադրանաւք ցարդ նեղուցներէն կանց-

նէին՝ առեւտրական զրօշի ներքեւ: Բ. Դրանը դիտողութիւն կընէր, բայց բացատրութիւն ստանալով, այլ եւս չէր ընդգիմանար: Այժմ կ'սպասուի տեսնել թէ այս փափուկ խնդիր ինչպէս պիտի կարգադրի:

— Ֆրանսացիք գրաւեցին զԹաճուրա:

Թաճուրա կը գտնուի Ատէնի դիմաց, Ափրիկեան եղերաց վրայ, ուր երբեմն կը տարածէր Եգիպտոսի իշխանութիւնը: Թաճուրա քաղաքի մը և ծովախորշի մը անունն է: Աւելի դէպ ի հարաւ, նոյն ծովեղերաց վրայ, կը գտնուին Ջէյլա եւ Պերպերա: Այս վերջին երկու կէտերն Անգլիացիք գրաւեցին, որով այժմ կը բռնեն Պապէլ Մանտէպի նեղուցին եւ Ատէնի ծովախորշին թէ՛ ասիական եւ թէ՛ ամերիկեան եղերքն: Երկու եղերաց միջեւ Բէրիւ կղզին ալ Անգլիացուց ձեռքն է: Այս գրաւմունք Ֆրանսացուց աչքը բացին, եւ անոնք ալ մօտեցաւ գրաւեցին զԹաճուրա, մինչ կըսուէր թէ Անգլիացիք այդ կէտն եւս գրաւել կը պատրաստուէին: Կը պատմուի թէ, Ֆրանսացիք 1857ին սպայ մը զրկած էին գրաւել զԲէրիւ, եւ մինչ այս սպայ կը ճաչէր Ատէնի անգլիացի հրամանատարին հետ, Անգլիացիներն իրենք գրաւեցին զԲէրիւ: Ֆրանսացիք, գրաւելով զԹաճուրա, վրէժ մը լուծած կը լինին: Արդէն Օպօք, Թաճուրայի հիւսիսակողմը, կը գտնուէր Ֆրանսացուց ձեռքն, ինչպէս նաեւ Սակալը, ի հարաւ: Թաճուրա միացման կէտ մ'է Ֆրանսայի այս ամերիկեան ստացուածոց միջեւ, եւ հետեւապէս այդ կէտի գրաւումը մեծ գոհութիւն կը պատճառէ փարիզեան մամլոյն: Բայց որովհետեւ Թաճուրա երբեմն Եգիպտացուց ձեռքը կը գտնուէր, Օսմանեան կառավարութիւնը վեհապետական իրաւունքներ ունի այդ կէտի վրայ, եւ կը մնայ տեսնել թէ Բ. Դրան ինչ աչքով պիտի նայի Ֆրանսական գրաւման:

## Ն Ե Ր Ք Ի Ն

Եւրոպական թերթերէ գոհութեամբ կը տեղեկանամք թէ Պերլինի Օսմ. դեսպանատան խորհրդական Վսեմ. Օհան էֆէնտի Պաղտատէան՝ Ափրիկեան Դեսպանախորհրդոյն մէջ երկրորդ պատուիրակ կարգուեր

է կայսերական կառավարութեան կողմէ :

— Առողջապահական խորհուրդն որոշեց ութ աւուր վերածել Սեփաստորդէն եկող շողենաւոց համար հաստատեալ քարանձիւներն :

— Օսմանեան կառավարութիւնն հրաւէր ընդունած է մասնակցիլ Նոր Օրլէանի Տիեզերական արուեստահանդէսի (Թղթատաւական ճիւղին) որ պիտի բացուի 1885 մայիս 31 ին :

— Լոտարայի Արարթալի գրամատան սընանկութեան պատճառաւ Պուքրէշի հրապարակն 150 հազար ոսկի վնաս կրեր է :

— Տեղական մի քանի ընկերութիւնք արտօնութիւն ստացած են Աղբիւնուսուրայ այլ և այլ կողմերն արծաթախառն կապարի, ծարուրի և այլ մետաղաց խաղարկութիւն ընել :

— Կ. Պոլսոյ պապական նուիրակ Տ. Բութէլլի անցեալ չարաթ օր Ֆէնէրի պատրիարքարանը գնաց ի շնորհաւորութիւն նորընտիր պատրիարքին : Կիրակի օրն ալ Տ. Յովակիմ Դ. փոխադարձ այցելութեան գընաց առ Տ. Բութէլլի, ի Բերա : Երկուստեք սիրալիք ընդունելութիւնք եղան : Յոյն թերթերն արեւելեան և արեւմտեան եկեղեցեաց միջեւ տեղի ունեցած սոյն նորանշանդէսքը գոհութեամբ կը յիշատակեն : Առաջին անգամն է որ պապական նուիրակ մը այցելութիւն կ'երթայ Յունաց Պատրիարքարանին :

— Յունաց նորընտիր Պատրիարքի Պէրաթը Դատական նախարարութեան կողմէ զրկուեցաւ Ֆէնէրի պատրիարքարանը : Այս Պէրաթ ըստ ամենայնի համաձայն է հանգուցեալ Յովակիմ Բ. Պատրիարքի արուած Պէրաթին :

— Բ. Դուռն յատուկ յանձնախումբ մը կազմեց որոյ պաշտօնը պիտի լինի հսկել որ Տէրբոսի ջրի ընկերութիւնն իրեն արուած արտօնութեան սահմանէն դուրս չենէ :

— Օսմանեան Կայս. Պանքայի ընդհանուր տնօրէն Պ. Ֆոսթէր, որ անցեալ չարթու վերադարձաւ Եւրոպայէն, պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու :

— Վեհ. Սուլթանն հրամայած է որ Կէտիկ Փաշայի Օսմանեան թատրոնը գնուի և վէտրէնէի փոխարկուի, ուր գլխաւորաբար պիտի աւանդուի արարերէն լեզուն :

— Էնկիւրիի մէջ Թուրք վարժապետներ հասցնելու համար տեղացիք վարժապետանոց մը հիմներ են :

— Գաւառաց երևոական քննչաց օգնականը իրենց ճանապարհի ծախքն ստացած և ճանրայ ելած են ամենքն ալ :

— Բ. Դրան հրաւէրին համաձայն, Օսմ. Կայսերական Պանքային Բարիգի ճիւղը կ'աշխատի կազմել Օսմանեան ընկերութիւն մը, գլխաւորապէս ծխախոտի Բէժիի խմբակին անդամներէն բաղկացեալ, չիմելու համար այն երկաթուղիներ որք օսմանեան գիծերը պիտի միացնեն սերպիական և սուլիարական գծերուն հետ, և բանեցնելու համար այն գծեր որք այժմ կը գտնուին ընդ վարչութեամբ Պ. Հիրշի : Բ. Դուռն կ'ակնկալէ թէ Խրաւարար Ատեան մը Օսմանեան կառավարութեան իրաւունք պիտի ստայ յիշեալ երկաթուղիները Պ. Հիրշի վարչութեան ձեռքէն առնուլ :

— Մեծ շուկային Փէրտահճի փողոցին մէջ մանիֆաթուրայի վաճառական Շէքէրճի Օղլու Նազով անուն Հրեայն 10 հազար ոսկի բացով անանկացաւ : Թարիգ կ'ըսէ թէ՛ այդ անանկութեան երեսէն վնաս կրողներն աւելի Հայ վաճառականք եղած են :

— Վառնայի Թղթատարն այսուհետեւ երեքշաբթի և չարաթ օրերը պիտի մեկնի Կ. Պոլսէն, եւրոպական ժամը երկուքին :

## Ա. Զ. Դ. Ա. Յ. Ի. Ն.

Եկեղեցական համագումար ժողովն այս երկուշաբթի գումարեցաւ ի Պատրիարքարան, ընդ նախագահութեամբ ներկայից Երիցագունին, Տ. Պօղոսեան Գեր. Տ. Գրիգոր Եպիսկոպոսին և Ատենապետ ընտրեցաւ Ալէաթճեան Գեր. Տ. Գրիգորիս Եպիսկոպոս : Ներկայ եկեղեցականաց թիւն էր 41 և ինը քուէներ զրկուած էին նամակաւ : Թէպէտ պատգամաւորութիւն մը զրկուեցաւ Երուսաղիմայ Ամեն. Տ. Եսայի Պատրիարքն հրաւիրելու, սակայն Ն. Սրբադնութիւն հիւանդ պառկած լինելով, չկրցաւ ժողովոյ գալ նախագահել :

Ատեանը բացուելուն, եկեղեցականք յաւընկայս երգեցին հոգեհանգստեան չարա-

կանն ու մաղթանք և « Հոգւոց » ըսին վասն Հոգւոյ հանդուցեալ Պատրիարքին : Թէպէտ անդամաց ոմանց կողմէ՝ առաջարկուեցաւ դադրեցնել ժողովոյ նիստն ի նշան սգոյ, սակայն ներկայք համամիտ չգտնուեցան, սա մտածմամբ թէ Հայաստանեայց Եկեղեցին պաշտօնապէս սուգ չընդունիր, քանի որ վախճանեալք անմահութեան կարժանանան և քանի որ Մեծն Ներսէս Պարթեւ յատկապէս արգիլած է սուգ բռնել :

Տ. Եղիշէ վարդապետ Այվազեան առաջարկեց որ Պատրիարքաց պաշտօնավարութիւնը սահմանափակ տեսչութիւն մ'ունենայ : Ժողովականք ըսին թէ Համագումարին վերաբերեալ խնդիր մը չէ այս, եւ թէ, սկզբամբ, քանի որ Առաջնորդը պատկեալ են իրենց վիճակին հետ, Պատրիարքն ալ այնպէս է իւր պաշտաման մէջ :

Տ. Ոսկի քահանայ խնդիր ըրաւ թէ, մինչ Սահմանադրութիւնն (յօդ. 2) ի կրօն անընդունելի չեղող եկեղեցականները միայն նշանակել կը տրամադրէ, Համագումար ժողովոյ անդամք ի քաղաքական անընդունելի եկեղեցականներն եւս պէտք չէ՞ որ դուրս թողուն ընտրելեաց ցանկէն : Պատասխանուեցաւ թէ Համագումարն-ընտրելեաց կրօնական հանգամանքներն եւ թիւ ի նկատ պարտի առնուլ : Իզմիրլեան Վրբազան դիտեց թէ Համագումարի անդամք ամենայն արժանիք և յարմարութիւն միանգամայն ի նկատ առնելով պարտին որոշել ընտրելիները :

Տ. Վահան վարդապետ առաջարկեց սահման դնել Համագումարին ընտրելեաց, յորմէ վարքուէ առնող եկեղեցականք Ազգային ժողովէն ալ չկարենան ընտրուիլ :

Տ. Հմայեակ Սրբազան պատշաճազոյն դատեց որ Համագումարն այս անգամ վարուի այնպէս ինչպէս վարուած է Սահմանադրութեան հաստատումէն ի վեր և Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հօր կողմէ Կրօնական ժողովոյ ներկայացեալ ցանկը նշանութեամբ զրկուի Ազգային ժողովոյ :

Տ. Իզմիրլեան Սրբազան պատասխանեց — « Այդ կերպով՝ ցանկ մը պատրաստող խողովակ մը կը լինինք, մինչ Սահմանադրութիւնն զմեզ կը կոչէ մասնակցիլ Պատրիարքական ընտրութեան : Որպէս զի այս մասնակցութիւն բանաւոր լինի, հարկ է որ, նախ, թիւ մը սահմանուի Համագումարի

ընտրելեաց, եւ, երկրորդ, այս սահմանեալ թուով ընտրելիք որոշուին ներկայից մեծամասնութեան քուէով : Այս իմաստով բանաձեւ մը պէտք է խմբադրել » :

Տ. Վահան վարդապետ ըսաւ թէ Համագումարն ենթարկեալ չէ Ազգային ժողովոյ : Կարելի է որ Ազգային ժողովը մերժէ մեր խնդիր. եթէ լռենք, պղտիկութիւն է եկեղեցականութեան. եթէ չլռենք, կրտուի թէ խռովութիւն և վէճ կը յարուցանենք : Լաւագոյն է որ մեր բանաձեւը պատրաստելով մատուցանենք ընտրելի Պատրիարքին :

Տ. Սահակ Աւագ քահանայ դէմ խօսեցաւ այս տեսութեանց : Համագումարն ընտրող մարմին չէ, այլ միայն ցանկ շինող է, ուստի մասնաւոր թուով ընտրելիք չենք կըրնար որոշել : Սահմանադրութեան վերաքըննութեան ժամանակ միայն այս խնդիրը կըրնայ յուղուիլ :

Բանաձեւին պատրաստութիւնը ետքի թողով, ժողովը նախ՝ օրակարգին համաձայն՝ ձեռնարկեց քուէարկութեան :

Աւատիկ քուէհամարին արդիւնքը, քուէից առաւելութեան կարգաւ .

Բաւ

1. Տ. Յարութիւն Արքեպ. Վեհապետեան նախկին Առաջնորդ Կարնոյ և Պատրիարքական Փոխանորդ յերուսաղէմ 41
2. Տ. Մատթէոս Եպիս. Իզմիրլեան Քաւրովիչ Նոր-Թաղի Իւսկ. 55
3. Տ. Մեղիսեդեկ Եպիսկ. Մուրատեան Առաջնորդ Զմիւռնիոյ 27
4. Տ. Բարթողիմէոս Եպիսկ. Զամբեան Առաջնորդ Պրուսայի 27
5. Տ. Խորէն Արքեպ. Նար-Պէյ Քարուզիզ Պէշիկթաշի 22
6. Տ. Խորէն Եպիսկ. Ալըքեան Վանահայր Արմաշի 21
7. Տ. Մկրտիչ Արքեպ. Խրիմեան Վանահայր Վարադայ և նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ 17
8. Տ. Խորէն Եպիսկ. Մխիթարեան Առաջնորդ Եդեսիոյ 16
9. Տ. Սիմէոն Արքեպ. Սէֆէրեան Պատր. Փոխ. Ս. Երուսաղէմի 13
10. Տ. Գրիգորիոս Եպիսկ. Ալէաթ-ճեան Առաջնորդ Տարօնոյ 12
11. Տ. Գրիգոր Եպիսկ. Տ. Պողոսեան Քաւրովիչ Խասդիւղի 7

12. Տ. Մեսրոպյան Արքեպիսկոպոսի 7  
 13. Տ. Եղիշիկ Եպիսկոպոսի Առաջ- 7  
 նորդ Արքեպիսկոպոսի  
 14. Տ. Արիստակես Եպիսկոպոսի Դերձակեան 4  
 15. Տ. Յարութիւն Եպիսկոպոսի Յովհաննէս- 4  
 եան Քարոյի Եպիսկոպոսի  
 16. Տ. Հմայեակ Եպիսկոպոսի Դիմաքսեան Ա- 4  
 ռաջնորդ Եպիսկոպոսի  
 17. Տ. Երեմիա Եպիսկոպոսի Տ. Սարգսեան 3  
 Միաբան Վարդապետ  
 18. Տ. Յակոբ Եպիսկոպոսի Ճգնաւորեան Ա- 3  
 ռաջնորդ Խարբերդի  
 19. Տ. Պօղոս Եպիսկոպոսի Մէլիքեան Վանա- 3  
 հայր Լիւթի-Անապատի և Առաջնոր-  
 դական Տեղապահ Վանայ  
 20. Տ. Ամբաստան Եպիսկոպոսի Սարգսեան 2  
 եան Վանահայր Աթոռերի  
 21. Տ. Երեմիա Եպիսկոպոսի Սահակեան Մի- 2  
 աբան Ս. Երուսաղէմի  
 22. Տ. Ներսէս Եպիսկոպոսի Գէորգեան, Ա- 2  
 ռաջնորդ Ռօտոսթոյի  
 23. Տ. Եղիա Եպիսկոպոսի Ճնճղեան, Առաջ- 2  
 նորդ Կեսարիոյ  
 24. Տ. Պետրոս Եպիսկոպոսի Թահմիզեան, 2  
 Առաջնորդ Սեբաստիոյ  
 25. Տ. Տիմոթէոս Եպիսկոպոսի Սարգիսեան, 2  
 Նախկին Առաջնորդ Պալքէսէրի  
 26. Տ. Մկրտիչ Եպիսկոպոսի Տիգրանեան Վա- 1  
 նահայր Մակարայեցւոյ  
 27. Տ. Աստուածատուր Եպիսկոպոսի Յովհան- 1  
 նէսեան Միաբան Ս. Երուսաղէմի  
 28. Տ. Փիլիպպոս Եպիսկոպոսի Նաճառեան 1  
 Առաջնորդ Տեղապահ Պաղատաի  
 29. Տ. Գէորգ Եպիսկոպոսի Դերձակեան Ա- 1  
 ռաջնորդ Կուտինայի  
 30. Տ. Լեւոնդ Եպիսկոպոսի Շիւմանեան 1

Քուէարկութենէն յետոյ վիճաբանութիւն-  
 նը շարունակեցաւ Համագումարի Բանաձե-  
 ւին վրայ։ Իզմիրեան Սրբապետ Կառաճար-  
 կէր որ Համագումարն այսուհետեւ 15 ընտ-  
 րեւեաց վրայ միայն քուէարկէ, և Ազգային  
 Ժողովը ներկայացուին, որ անոնցմէ դուրս  
 ուրիշ քուէ չկարենայ տալ։ Տ. Խորէն Նար-  
 -Աէյ Սրբապետ յարմարագոյն դատեց 12  
 ընտրեւեաց « առաքելական » թիւը։ Խոր-  
 դիրը քուէի դրուելով, 19 քուէներ պատշաճ  
 դատեցին 15 ընտրեւեաց թիւն, և 17 քու-  
 ուէներ՝ « առաքելական » թիւն։

Ըստ այսմ խմբագրեցաւ Բանաձեւն, որ  
 կը խնդրէ բարեփոխել Սահմանադրութեան  
 24 յօդուածն, այնպէս որ Համագումարը  
 միայն 15 ընտրեւեաց ցանկ մը չի նշէ, եւ  
 այս ցանկ քուէարկուի միայն ներկայից մե-  
 ծամասնութեամբ։

— Կեդրոնական վարժարանի Հաստա-  
 տութեան համար հոգեւոյս Ներսէս Պատ-  
 րիարքի նախաձեռնութեամբ բացուած հան-  
 դակութեան մասնակցող անդամք այս  
 կիրակի դուռնաբուս մ'ունեցան ի տան Մեծ.  
 Խառնեան եղբարց ի Բերա, եւ յետ երկար  
 խորհրդակցութեան, հետեւեալ որոշումները  
 տուին։

Ա. Նախապէս եղած հանդանակութեան  
 դուռնաբուս ամբողջովին յատկացնել ՆԵՐՍԵՍ-  
 ՅԱՆ գիշերօթիկ վարժարանի անմիջական  
 բացման։

Բ. Այս վարժարան առ այժմ հաստա-  
 տել հոգեւոյս Ս. Պատրիարքին Օրթոգիւղի  
 տան մէջ։

Գ. Այս նպատակաւ եղած հանգանա-  
 կութիւնը շարունակել, աւելի ընդարձակ  
 միջոց մը տալով անոր, և ամեն հայաբնակ  
 քաղաքաց ազգայնոց օժանդակութեան կո-  
 չում ընելով։

Սոյն անօրինութեան գործադրման հա-  
 մար Յանձնաժողով մը կազմուեցաւ հետեւե-  
 ալ պատուարժան անձերէ։

Աստուածատուր Զուհր-էֆէնտի

Խառնեան Մկրտիչ »

Կիւլպէնկեան Սերովբէ »

Կիւլպէնկեան Տիգրան »

Յակոբեան Միքայէլ »

Նորատունկեան Յարութիւն »

Յանձնաժողովը նախընթաց օրը նիստ  
 ընելով Մեծ Խառնեանց դրասենեակը, իւր  
 դիւանը կազմեց հետեւեալ կերպիւ։

Ատենապետ — Մկրտիչ էֆ. Խառնեան

Գանձապետ — Սերովբէ էֆ. Կիւլպէնկեան

Քարտուղար — Մինաս էֆ. Զեբազ

Եւ որոշեց միանգամայն անմիջապէս իւր  
 կազմութիւնը և ծրագիրը մասնաւոր գործ  
 մը հաղորդել Կեդրոնական վարչութեան և  
 նորա վաւերացումն ստանալէ յետոյ, ան-  
 յատկապէս գործի ձեռնարկել։

— Հոգեւոյս Պատրիարքին գրութիւններն  
 ու թղթակցութիւններն աչքէ անցուելով,  
 ինչ որ հանրային և պաշտօնական բնութիւն

ունէր, յանձնուեցաւ ի Պատրիարքարան:

Հասարակութեան մէջ զրոյցներ կը պտըտէին եկեղեցականաց ոմանց կողմէ առ Ն. Սրբապետութիւն ուղղեալ նամակի մը վրայ, որ բաւական յուզեր է հանդուցեալ Պատրիարքը: Բայց ըստ մեր մասնաւոր տեղեկութեանց, այսպիսի նամակի մը հետքն իսկ չէ գտնուած, ինչպէս արդէն Ն. Սրբապետութեան եղբայրն հերքած էր առ Գեր. Փոխանորդ Հայրն ուղղեալ իւր գրով: Մի միայն գտնուած է, ինչպէս արդէն կըսուէր, բժշկական դասէն բարձրաստիճան պաշտօնակալի մը գիրն առ Արքեպիսկոպոս ոմն, որ սխալմամբ անցած է Հանդուցելոյն ձեռքը. բայց այս գրին հեղինակն եկեղեցական մը չէր:

Քաղաքական ժողովն այս չորեքշաբթի գումարեցաւ Ղալաթիոյ Մատենադարանին մէջ, առնապետութեամբ Վսեմ. Սիմոն պէյի Մաքսուտեան եւ ի ներկայութեան Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հօր:

Ժողովը գլխաւորաբար զբաղեցաւ ազգային կալուածոց հանրածանօթ խնդրով: Մայրաքաղաքիս տասնէ աւելի գլխաւոր Թաղական խորհուրդք, ինչպէս նաև Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն, երկերկու պատուիրակ զրկած էին իրենց կողմէ, ըստ կանխադրոյն հրաւերի:

Ժողովն յիշեալ ներկայացուցիչներուն հետ բաւական խորհրդակցելէ և հարկ եղած տեղեկութիւնները քաղելէ յետոյ, առանձնացաւ, եւ յետ խորհրդակցութեան, որոշեց այս խնդրոյ մասին որ և է տնօրինութիւն չընել և խնդիրն իւր այժմեան վիճակին մէջ Կայսերական կառավարութեան ուշադրութեան ներկայացնել:

Ժողովն զբաղեցաւ ապա հանրային եւ մասնաւոր ուրիշ կարգ մը խնդիրներով:

— Դատական նախարարութենէն թէպէտէ մ'եկաւ ի Պատրիարքարան, յորում Վսեմ. Հասան Ֆէհմի. փաշա, ծանուցանելով թէ մայրաքաղաքիս մէջ մարդահամարի դործողութիւնը վերջանալու մօտ են, բայց թէ կան տակաւին շատեր որք չեն ուզեր արձանագրուիլ, կամ կը ծածկեն իրենց ընտանեաց անդամոց ճիշդ թիւը, կը յիշեցնէ վերջերս հրատարակեալ մարդահամարի օրէնքին մէջ նշանակեալ տուգանքներն և այն անպատեհութիւններն որոց պիտի են

թարկին ամեն տնոնք որ մարդահամարի դործողութեանց փակումէն առաջ չեն արձանագրուած և չեն ստացած արձանագրութեան թուղթերը:

Պատրիարքարանն այս պաշտօնագիրն ստանալուն պէս Շրջաբերականներ զրկեց մայրաքաղաքիս Թաղական խորհրդոց, որպէս զի եկեղեցեաց մէջ պէտք եղած ծանուցմունք լինին ժողովրդեան:

— Լրագրական ասպարիպին վրայ ծանօթ Տ. Գ. Քէլէկեան էֆէնտի այս օրերս պիտի ձեռնարկէ հրատարակել «Ճիշտ» առնուն գրական և գիտական շաբաթաթերթ մը, հայատար և թրքաբարբառ:

## ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Ա.Ժ.Ա.ՆՍ ՀԱՎԱՍ

ՖԻՍԱՆՍԱԿՈՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Փարիզ, 26 նոյեմբեր

Երեսփոխանական ժողովին մէջ նախարարապետ Պ. Ժիւլ Ֆէրրի. հարցման մը պատասխանելով՝ ըսաւ թէ Կառավարութիւնը կ'ընդունի Սնդիկոյ միջամտութիւնը Փրանքօ-չինական խնդրոյն մէջ, Քէլէկեանի և Թամսիւիի (Պրոմոզա) առժամեայ գրաւման հիման վրայ:

Նախարարապետը ծանոց նաեւ թէ ի բաց առեալ Թոնքինի համար խնդրուած 7 միլիոնի վարկն, Կառավարութիւնը 45 միլիոնի ուրիշ վարկ մը պիտի խնդրէ 1885 տարւոյ առաջին վեցամսէին համար (Մոնէթ-հարուշիւն):

ՖԻՍԱՆՍԱ. ԵՒ ՄԱՐՈՒՔ

Թանձէր, 26 նոյմ:

Ֆրանսայի և Մարոքի միջեւ առկա մընացած դժուարութիւնը կարգադրուեցան: Մարոքի Սուլթան Մուլէ-Հասան Փրանսական դեսպան Պ. Օրտէկայի նամակ մը զըրկեց, յորում ամենակատարեալ կերպիւ ներողութիւն կը խնդրէ քանի մը պաշտօնատարաց ընդդէմ Ֆրանսացիներու կամ Փրանսական պաշտպանեալներու ի գործ դրած անիրաւութեանց համար:



# ՀՐԴԵՀԻ ԴԵՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE  
Insurance company  
ՆՈՐԹ-Զ ՊՐԻԹԻՇ ԷՆՊ ԻՆՍՈՒՐԱՆՍԻԿԱՆԻ

| Լոնդոնի և Էսթիմոնի ապահովումներ | Մեծ Լիբ.  |
|---------------------------------|-----------|
| Արտոնադրական գումարներ          | 3,000,000 |
| Բաժանորդագրերի գումարներ        | 2,500,000 |
| Վճարելի                         | 625,000   |
| Պահանջների գումարներ            | 4,392,235 |
| Կանխավճարների գումարներ         | 3,841,194 |
| Դեմ պահանջների գումարներ        | 6,058,429 |
| Հրդեհի ճիւղին հասցված           | 4,186,865 |
| 1883 տարւոյ                     | 551,307   |
| Կենաց ճիւղին հասցված            | 4,738,172 |
| 1883 տարւոյ                     |           |

NORTHERN  
Assurance company  
ՆՕՐԹ-Զ ԸՐՆ

| Լոնդոնի և Էսթիմոնի ապահովումներ | Մեծ Լիբ.  |
|---------------------------------|-----------|
| Բաժանորդագրերի գումարներ        | 3,000,000 |
| Վճարելի                         | 300,000   |
| Պահանջների գումարներ            | 814,874   |
| Կանխավճարների գումարներ         | 4,778,300 |
| Դեմ պահանջների գումարներ        | 2,890,171 |
| Հրդեհի ճիւղին հասցված           | 520,206   |
| 1883 տարւոյ                     | 251,572   |
| Կենաց ճիւղին հասցված            | 771,778   |
| 1883 տարւոյ                     |           |

Ստորագրելով իւր բաժնիւնը, յաճախողը պարտավորւած է իւր համարած թիւով հաճախել ընկերութեանը և քաղաքի ընդհանուր յարգող հասարակութեան կը ծախսուած թէ ինչն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի գումարներ մը մէջ կը գանուի, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ գումարներ կը մատուցանէ։

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելանալուն ընկերութեան ալ կրնայ աւելի մեծապէս օգուտը ապահովութիւնը բոնորոշելու ինքզինք ներկայացնել։

Գրեթէ ամէն կարգի վտանգաւոր ապահովութիւնը կրնան ընդունիլ, ինչպէս Բերսլի, Ղալաթիյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և գաւառները։

## MARITIME

Insurance Cie limited of Liverpool  
Capital Lt. 500,000

## ՄԱՐԻԹԱՅՄ

Ծովային ապահովումներ ընկերութիւն

Գրամադրութիւն 500,000 Մեծ Լիբ.

Ստորագրելով, շոգեհաններու և առադաստաններու մէջ ի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ։

Գրեթէ ամէն կարգի վտանգաւոր ապահովութիւնը կրնան ընդունիլ, ինչպէս Բերսլի, Ղալաթիյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և գաւառները։

Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակատար յիշեալ Ընկերութեանց  
Գ.Ա.Ռ.ՆԻԿ Յ. ՍԵՐՈՒՄԱՆ

## ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

## ՀՐԴԵՀԻ ԴԵՄ

## ՈՐԼԻԿՆԱ

Ծովային ապահովագրութիւն : -Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուիլիամս, Եօրկիատիս խան Պահչէ - գաբու, Պոլիս. կամ Ղալաթիյ, Ալէքսիատի խան թիւ 15 :

Արտոնատէր Կ. Ս. Իսթիքիճեան  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ